շնորհք ըստ չափոյ պարգեւացն քրի։

Ալէլուիա ալէլուիա։

Դամա տրա ինձ տէր՝ զի ես յանբծուե-
լիցէ իմում գնացի, ի տէր յուսացայ
զի մի եղիցէ հիւանդ։

Սէր Աստուած Յիսուս որ ըստ Աստուա-
տերն մեր Յիսուս,

Ելեալ անտի յնե գնաց ի կողմանս
տիւրոսի և սիդոնի։ Եւ ահա՝ կին
մի քանանացի ի սահմանաց անտի նո-
ցա՝ ելեալ, աղաղակէր և ասէր. ողոր-
մեաց ինձ տէր որդի դաւթի, դեւսար
իմ՝ չարաչար պատահարի։ Եւ նա ոչ
ետ նմա պատասխանի։ Եւ մատուցեալ

աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և
ասէին. արձակեա զնա՝ զի աղաղակէ
զհետ մեր։ Նա պատասխանի ետ և
ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ
առ ոչխարս կորուսեալս տանն Իսրա-
յէլի։ Եւ նա մատուցեալ երկիր պա-
գանէր նմա և ասէր. տէր՝ օգնեա ինձ։
Պատասխանի ետ նմա և ասէ. ոչ է
բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և
արկանել շանց։ Եւ նա ասէ. այո տէր,
քանզի և շունք կերակրին ի փշրա-
նաց անկելոյ ի սեղանոյ տեառն իւ-
րեանց։ Յայնժամ պատասխանի ետ
նմա յն, և ասէ. ով կին դու՝ մեծ են
հաւատք քո, եղիցի քեզ՝ որպէս և կա-
միս։ Եւ բժշկեցաւ դուստր նորա ի
նմին ժամու։

«Բարով։

Եւ ևս խաղաղուե զտէր աղա՛։
սրկ Ա՛ման ի վերուստ խաղաղուե և փրկ-
կուե անձանց մերոց զտէր ա՛։ Եւ ևս
վասն հիանդիս այս անուանս որ յուսա-
ցեալ է կոչել զանուն տեառն։''

Աղօթք։

քհ

Տարերարև մարդասէր տէր՝ որ զամ-
հիւանդութիւնս և զամ ախտս բժշկես.
բժշկեա պայս հոգւոյ քո. յարի
զսա ի մահացու ցաւոց. այլ արա ո-
ղջմուքեա և գթութեա քո. փարատեա ի
սմանէ զամ տկարութի և շհիւանդութի.
զի յարուցեալ քո կարող ձեռամբ,
ծառայեսցէ քեզ հանդերձ ամ գո-
հութեա. Օ ի դու ես ամ ամ ողոր-
մութե և կեցուցիչ. և քեզ մատուցա-
նեմք զփառս հօր և որդւոյ և հոգ՛ւ։

Վասրուհի։

սրկ

Ընդ ես խաղաղութե զտէր աղաչեսցուք,
ընկալ կեցոյ և ողորմեա։

քհ

Օրհնեա՛ տէր։
Օրհնութի և փառք հօր և որդւոյ, և
հոգւոյն սրբոյ. այժմ և՛։
Աղօթեա՛ հնձ ամ՝ ըստ մեծի ողոր՛։
Օ ձայնն ըմն ասա՛։

Հ. ԱՊԱՀԱՆ. ՃԶ.

ո Ո՛ անապական ըզհոգևոր ըզգանձն՝ յապականացու կենցաղըս ծախեցի. այլ առ քե՛զ միայն պաղատիմ բարեբարել փրկիչ՝ խընայեա՛ ի մեղուցեալ ծառայ։ Ո՛ ցանկ հոգւոյ իմոյ քակտեցի և եղէ անբարուն՝ ակն ընդ. այլ առ՛։ Ըստաքանց եղէ ես որպես զաղմաւենի՝ պըտղակորոյս որպես ձիթենի. այլ անպի՛շաչար և անոխակալ փրկիչ՝ խընայեա՛ ի մե՛։

եա Հառաչեցի զանընդունելի ըզկեծուքն առ բարեգո՛ւթեն ար՛ծ. և լըսաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ. և եհան ըզկեանս ի մ՛յապականութէ՛։ Ո՛ւե՛ր ե՛ ըզմահու կարողութի՛ն՝ որ խաչեցաւ վասըն մեր. և յարեաւ ի՛ մեռելոյ որպէս յամենայնի կա՛րող՝ փրկելով ըզկեանս։ Ո՛ստուա՛ծ է՛ որ ծընաւ ի՛ միշտ կուսէն ի փրկութի՛ ազգի մարդկան՝. լուսաւորելով ըզխիղճըս ի գիտուի՛ Աշմարտութե. և բարեբանե՛ մք ըզնորա բարեգթութի՛ւնն։

Օ՜ անա՛րատ՝ տէր օրհնեցուք զքո՛ ա-
ծինն՝ որ կոյս մըննաց յետ ծընանդեան՝
և տարաւ յորովայնի զանտանելին ա-
մենեցուն զհամաբնակիցըն հօր և ա-
մենասուրբ հոգւոյն։

Կրկնէ։

Մեք զքեզ ածեմք և զամ սուրբս քո՛ զոր
ընկալար զաշակերտս մեր քա՛ն,
զնծացեալ արդարքդ ի տէր՝ ուղղոց
վայել է օրհնուիլ։ խոստովան եղեր զքեզ
տեառն օրհնութիւն. տասնաղեաւ սաղմո-
սարանաւ սաղմոս ասացեալ նմա։

Օրհնեցէ՛ք զտէր յօրհնուիլ նոր զի
բարի է, սաղմոս ասացէ՛ք նմա օրհ-
նութեամբ։

Պօղոսէ Ճոմոսէլոյն ի Հռովմայեցի՝ ընդունի
է ընդ երկոսածս։

Ձ՝ղբարք՝ պարտէ մեզ որ կարօղ եմք՝
զտկարսն տկարացն բառնալ. և մի
անձանց և եթ հաճոյ լինել։ Այլ իւ-
րաքանչիւրըք ի մեզ ընկերին հա-

Ձայն լեռնէ ի բարիս՝ վասն շինուածոյ։
Բանդի և քրիստոս ոչ երեկ անձին
հաճոյ եղև, այլ որպէս և գրեալ է.
նախատինքք նախատչաց քոց անկան ի
վերայ իմ։ Հայց որ ինչ գրեցաւն, ի
մեր վարդապետուէ գրեցաւ. զի համ
բերուէ և միխիթարուէք գրոց զհյոյսն
ընկալցուք։ Այլ ած համբերուէ և
ամ միխիթարուիք՝ ասացէ ձեզ զնոյն
խորհել ընդ միմեանս ըստ յիս քն. զի
միաբանուէք ի մի բերան՝ փառաւորե
առնիցէք զած և զհայր տն մերոյ յի
քս։ Այսոր որոյ ընկալարուք զմիմեանս,
որպէս և քս ընկալաւ զձեզ ի փառս
աստուծոյ։

Ամէն։ ալէ։ Ած յանուանդ քում կեցո
զիս և ի զօրուէ քում իրաւ ա՛։

Սէյ Աստուած ձեր՝ որ ըսա զա՛։
Տէրն մեր ձա՛։

Ասէ ցնոսա. ով ե՛ ի ձենջ՝ որոյ ինչ
բարեկամ, և երթայցէ առնա ի
մէջ գիշերի, և ասիցէ ցնա. բարե-

կամ՝ տուը ինձ վախ երիս նկանակս
չի բարեկամ իմ ելեն առիս յուղուդ,
և ոչինչ ունիմ դնել առաջի նորա։
Այս նա՝ի ներքուստ տայցէ պատաս-
խանի և ասիցէ. մի աշխատ առներ զիս,
զի դուրքդ փակեալ են, և մանկունքս
ընդ ինև կան յանկողնի։ ոչ կարեմ
յառնել և տալ քեզ։ Ասեմ ձեզ, ե-
թէ ոչ յարուցեալ տայցէ նմա՝ վասն
բարեկամուենն, սակայն վասն ժուռենն
յարուցեալ տայցէ նմա՝ ղինչ և պի-
տոյ իցէ։ Այս ես՝ ասեմ ձեզ. խնդրե-
ցէք՝ և տացի ձեզ, հայեցէք՝ և գըտ-
ջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ։ Ո՞ի
ամ որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝
գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։
Յո՞ր ոք ի ձենջ հայր խնդրիցէ որդի
իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն՝ ո՞ձ
տայցէ նմա. և կամ խնդրիցէ ձու, մի
թէ կարի՞ց տայցէ նմա։ Ապա եթէ
դուք ոչ չարքդ էք՝ գիտէք պարգևս
բարիս տալ որդւոց ձերոց, որչափ
ևս առաւել հայր ձեր երկնից տայ-

ցէ բարիս այնոցիկ, որ լինդրենն ի նմանէ։

Վ. Աղօթք։

սրկ Նէ ևս խաղաղութե՛ զտեր աղա՛։ Այսն ի վերուստ խաղաղութե և փըր-կութե անձանց մերոց զտեր աղա՛։ Նէ ևս վասն հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն տեառն։

Ն. Ղ. Ի։

քհ Խաղաղմողըմ և բարերար տեր՝ որ զօրացուցեր զմեզ ի ձեռն սրբոց աս-ուածաբեղէն՝ քահանայական աղօթիւք զհիւանդս բժշկել. աղաչեմք զքեզ, շնորհեա բժշկութիւն և փրկութի-ւն այս անուն ծառայիս քոյ փարատեայ զամենայն հիւանդութիւնս, և սրբեա զաղտեղութիւնս հոգւոյ և մարմնոյ սորա մարդասիրութեամբ քոմէ. Նէ քեզ փառք և իշխանութիւն և պատիւ այժմ և՚։

Գ՝արթուն։

Եւ ես խաղաղութեամբ զաեր աղաչեմ՝ սրկ
ցուքդ ընկալ կեցո՛ և ողորմեա՛։
Ո՛րհնեա՛ տէր։
Ո՛րհնուի՛ և փառք հօր և որդւոյ և քհ
հոգւոյն սրբոյ. այժմ և՛։
Ողորմեա՛ ինձ աստ ըստ մեծի ողոր՛։

Ե՛ղիսաբ. երկ։

Վ՝ասիսո՞ւ ես ասուածո՛ց. ողո՛ր՛ր՛ դ
մեա՛։ Ա՛նօրինուք՛ ի մեղս երկնեաց
դիս մայր իմ. աղաչեմ փրկիչ ողո՛ր՛ր՛
մեա՛։ Ա՛խրատութեամբ մեղաց անկանիմ
աւ քեզ փրկիչ՝. մի անտես առներ՝.
ողո՛ր՛ր՛մեա՛։
Ո՛՝ղեկեայք՛ն քեզ մաղթեմ փրկիչ՝. էսա
որ կենարար բանիւ քո լուծեր զեր-
կուընս մահու. փա՛ռատեա՛ և զիմ ըզ-
հիւանդութիւն. յոյս կենդանութեա՛ մեր
կեցո՛՝ ըզմե զ։ Ո՛ր անմահարար քո
մեռելութե՛ն աւերեալ ըզդրունըս դը-
ժոխոց մեռուցեր ըզմա՛՝ն. կո՛նագործ-
ծեա՛ և զիս զմեղաց ըզմեռեալս. յոյս։

Ա՛ստուր և անքի՛ծ կոյս յետ ծընընդեան՝ ոք մարմնով ծընաւ զարգացաւ կօշկն ի կապից մահու. քնարեխօս լեր վասն անձանց մերոց փրկել ի սպասու նապետաց գեհենոյն։

Վհատութիւն։

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մե՛ր։ Ընկալ տէր զաղաչանս մեր քարե՛։ Յարիցես ած և ցրուեսցին թո՛ւ թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։

(Գլուխ ութերորդ ի Յովհաննէ ընկերացուածոյ է ընդ ընթերցուածոյ

Ընդ՛ երբ՝ աշակերտ զձեզ գթութիւն ոչ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ ոչ, զխօսուն պաշտօնդ ձեր։ Եւ մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք ի նորոգուի միտաց ձերոց, առ ի քննել ձեզ զլաւն, և եթէ զինչ են կամքն ոչ, քարին և

հաձոյն և կատարեալ։ Զայս ասեմ
շնորհօքն ոյ որ տուեալ են ինձ՝ ամի
որ է ի ձեզ, մի առաւել ինչ խորհել
քան զարժանն խորհելոյ այլ ի խոր-
հել զգաստանալ իւրաքանչիւր, ո-
պէս բաժանեաց ամ չափ հաւատոյ։
Բայց ա՛լ, ո՞ր բարի կայ զի վայե-
լուչ, զի բնակիլն եղբարք ի միասին,
Որպէս խադ զի իջանէ ի գլուխ և ի
մորուսն ահարոնի, և ի մորուացն ի-
ջանէ ի դրապանս զգեստու նորա։

Սէր Աստուծոյ ընդ ամենայն որ սիրէ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։
Պատասխանի ետ յո՛ւ և ասէ ցնոսա,
եթէ ունիցիք զհաւատան ոյ, ամէն
ասեմ ձեզ, որ որ ասիցէ լերինս այս-
միկ՝ քարձիր և անկիր ի ծով, և ո՛չ
երկմտիցէ ի սրտի իւրում. այլ հա-
ւատայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի
նմա զոր ինչ և ասիցէ։ Վասն այսո-
րիկ ասեմ ձեզ. զամ ինչ վասն որոյ
աղօթես արարեալ խնդրիցէք, և հա-

ատայցեք Թէ առնուք, եղիցի ձեզ։ Եւ յորժամ յաշօթս կայցեք, Թողուցուք եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի և Հայրն ձեր որ յերկինս է, Թողցէ ձեզ զյանցանս ձեր։

Վարդ։

սրկ Եւ ևս խաղաղութիւն զտէր աղաչեմ։ Ամէն։ Ի վերուստ խաղաղութիւն և փրկութիւն անձանց մերոց զտէր աղաչեմ. Եւ ևս վասն հիւանդիս այս անուն որ յուսացեալ է կոչել զանուն տեառն։

Ընդ։

քհ Տէր ամէն մեր՝ որ նստիս ի վէր քերովբէից, և հայիս յանդունդս. հայեաց յայս անուն ծառայս քո ի բարձրութենէ սրբութենէ քո, հեռացո՛ ի սմանէ զամէն յաւս և զամէն աղաեղութիւն, և տուր սմա զառաղ ջութիւն զամէն աւուրս կենաց իւրոց։ Եւ քեզ փառք և իշխանութիւն,

Վարդ։

Նէ ևս խաղաղութեճ զտեր աղաչես- սրկ
ցուք, քնկիլ կեցո և ողորմեա։

Երկնեա տեր։

Երկնուճ և փառք հօր և որդւոյ և քհ
հոգւոյն սրբոյ. այժմ և։
Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողոր։
Օ՜ փոխն լման ասա։

Շարական. Քձ։

Ընկանիմ առաջի քո՞ և խնդրեմ ըզ- ո
թողուճ յանցանաց իմոց՝. մի անտես-
առներ հայր ղաղաչանս իմ։ Ընդ-
ղակեմ որպես մաքսաւորն. և հեղում
ղարտասուս իմ առաջի քո որպես պոռ-
նիկն՝. մի ան։ Յաներևոյթ Թշնա-
մւոյն պարտեցայ. և ի գաղտնի նե-
տից քնսարկուին վիրաւորեցայ՝ մի ան։
Յոյս կենդանուճ և փրկուճ իմոյ ա՛ր էառ
ած՛ծ իմ։ յիշեա զիս որպես երբեմն
ղեզեկիայն՝. և դարձո զհոգի իմ ի
դրանց դըժոխոց։ Ո՛ր կամաւոր մա-
հուամբ քո՞ մեռուցեր ըզմահ քո՛

ար՞ծ. և լուսափայլ յարուն՞ք քո կենաս-
գործեցեր զաշխարհս՝. կենագործեա
և զի՞՞ս զմեզ ըզմեռե՞լս։ Այլ քեզ
ապաւինիմ՞ք սուրբ ածածկեա. քա-
րեխօսեա անդադար առ որդիդ քո և
աստուած մեր՝. փրկել ըզմեզ ի փոր-
ձուԹենէ և յամենա՞յն չարանգիտ
մերոց։

«Հարսանիք։

Ա՞ր զածածկենն և զամ սուրբս քարե՞։
Ընկալ տէր զաղաչանս մեր քա՛։
Որ բնակեալն ես յօգնուԹի քարձրելոյն,
ընդ հովանեաւ ոյ յերկինս հանգիցէ։

քհ
արկ

Յօհաննու ածաչելոյն ի Կաղուաղնկեայց
ղալեան և ընկերացածոյ։

Ան դուք օծուելք ունիք առ ի Քրիստ,
և գիտէք ամենեքեան Ա՛չ գրեցի
ձեզ՝ եԹէ ոչ գիտէք զՃշմարտուԹիւն,
այլ եԹէ գիտէք զնա. և եԹէ՝ զի
ամ ստուէ ոչ է ի ՃշմարտուԹէ անտի։

Լսակ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ ուս-
ռանայ եթէ յիսուս չէ քրիստոս։ Այ-
սակ է նեռն, որ ուրանայ զհայր և
զորդի։ Ամենայն որ ուրանայ զորդի,
և ոչ զհայր ընդունի. որ խոստովա-
նի զորդի, նա և զհայր իւր ընդունի։
Դուք՝ զոր լուարուքն սկզբանէ՝ ի
ձեզ բնակեսցէ. զի եթէ ի ձեզ բնա-
կեսցէ, զոր սկզբանէն լուարուք, և
դուք յորդին և ի հայր բնակեսջիք։
Եւ այս են աւետիքն զոր աւետա-
նեաց նա մեզ՝ զկեանն յաւիտենա-
կան։

Ընդ այլ ալէ։ Երանի ումմ թողուն եղ-
ևս մեզաց, և ծածկեցան ամ՛ յանցանք
նորա։

Սէց Ա՞ռնէս Յէ Ռէ՝ որ ըսա Գա՞։

Ընչաչեր զնա ումն ի փարիսեցւոցն՝
զի կերիցէ ճաշ ընդ նմա։ Եւ մտեալ
ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ։ Եւ
ահա մի էր ի քաղաքին մեղաւոր. եւ

րեւ գիտաց Թէ բաղմեալ է Ի տանն
փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ
աղնուի. կայր յետոյ առ ոտս նորա,
լայր. և արտասուօքն սկսաւ Թանձր
զոտս նորա, և հերսով գլխոյ իւրոյ ջն-
ջէր. և համբուրէր զոտս նորա, և
օծանէր իւղովն. Եւ տեսեալ փարի-
սեցւոյն որ կոչեալ էր նա, ասէր ընդ
միտս իւր. սա Թէ մարգարէ ոք էր
ապա գիտեր Թէ ո՞վ. կամ որպիսի՞ ոք.
կին մեղաւնայ Ի սա. զի մեղաւոր է։
Պատասխանի ետ յե՝ և ասէ ցնա, սի-
մոն՝ ունիմ ինչ ասել քեզ։ Եւ նա ա-
սէ, ասա վարդապետ։ և ասէ. երկու
պարտապանք էին ուրումն փոխատուի.
մին՝ պարտէր հինգ հարիւր դահե-
կան, և միւսն յիսուն։ Եւ ըզրև ոչ
գոյր նոցա հատուցանել երկոցունց
շնորհեաց. արդ ասա՝ ո՞վ առաւել սի-
րեսցէ զնա։ Պատ սիմոն. ինձ այսպէս
Թուի՝ եԹէ որում զբազմունն շնոր-
հեաց։ Եւ նա ասէ ցնա. ուղիղ դա-
տեցար։ Եւ դարձեալ Ի կինն կաշին,

ասէ,

ասէ ցսիմոն. տեսանեմ զայս կինն, մնի
՚ի տուն քո ջուր ոտից իմոյ ոչ ետուր,
իսկ սա՝ արտասուօք իւրովք եթա՛յ
զոտս իմ, և հերով իւրով ընջեաց։
Համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա՝
ւասկի յորմէ հետէ մտեալ եմ, ոչ
դադարեաց ՚ի համբուրելոյ զոտս իմ։
Իւղով զգլուխ իմ ոչ օծեր, սա՝ իւ-
ղով անուշիւ օծ։ Վասն որոյ ասեմ
քեզ. Թողեալ լիցին սմա մեղք իւր
բազումք, զի յոյժ սիրեաց։ Ո՛վ ո-
րում շատ Թողուցու՝ շատ սիրէ, և ո-
րում սակաւ՝ սակաւ։ Եւ ասէ ցնա.
Թողեա՛լ լիցին մեղք քո։ Եւ սկսան
որ բազմեալն էին ընդ նմա՝ ասել
ընդ միմս իւրեանց. Ո՞վ է սա՝ որ ըզ-
մեղս Թողու։ Եւ նա՝ ասէ ցկինն.
Հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ՚ի
խաղաղութի՛ւն։

Վարդան։

Եւ ևս խաղաղութե՛ զտէր աղա՛։

Վասն ՚ի վերուստ խաղաղութե և փըր-

կուե անձանց մերոց զտեր աղա՛.
Նա և վասն հիւանդիս այս անուն որ
յուսացեալ ե կոչել զանուն տեառն։

Աղօթ։

ՔՀ Պատհանամբ զքեզն տեր ած մեր, որ
ես բժիշկ բարի՝ անձանց մերոց. որ
զհիւանդուն ես մեր բառնաս. որ քո վի-
րօք ամենեքեան բժշկեցաք։ Որ հո-
վիւդ ես բարի, և խնդրօղ մոլորեալ
ոչխարին։ Որ անձանց քեզ եկելոյ տաս
մխիթարութիւն, և կեանս մահացելոց։
Որ զաղբիւր արեան, տեառատեսին
քոյնիւ հանդերձի քո բժշկեցեր։
Որ զղուստր քանանացւոյն ՚ի դըժնա-
դակ դիւացն ազատեցեր։ Որ զպարա-
երկուց պարապանացն շնորհեցեր. և
մեղաւոր կնոջն զթողուի եառուր։ Որ
զբժշկուի անդամալուծին պարգևե-
ցեր հանդերձ թողութ մեղաց նորա։
Որ զմաքսաւորն բանիւ արդարացու-
ցեր. և զաւազակն ՚ի վերջին խոստո-
վանութե նորա ընկալար։ Որ զմեղս

աշխարհի բարձեր, և ի խաչին բե-
ւեռեցեր. Օ՜ քեզ աղաչեմք, և քեզ
պաղատիմք, ներեա և թող զանօրէ-
նութիւնս և զվեղս սորա զկամայ և զա-
կամայ, զգիտուեն և զանգիտուեն, զոր
ի գիշերի և զոր ի տունջեան. Ա՛յո
տէր ամէ՝ լուր լինիմ մեղաւորիս ի պա-
հուս յայսմիկ վասն այս անուն ծառա-
յիս քո, անտես արա իբրև անյիշա-
չար ամէ զյանցանս սորա զայմ. Օ՜ քե-
րան սորա քոյին օրհնութեդ լցո. ըզ-
շրթունս սորա բաց առ ի փառա-
բանութիւն անուանդ քումմ սրբոյ. զձեռս
սորա տարածեա ի գործս պատուի-
րանաց քոց. զոտս սորա առ յընթացս
աւետարանին ուղղեա. և զամ ան-
դամս սորա և զմիտս պարկեշտեա քո-
յին շնորհօք. Որու տէր ամէ մեր՝ որ
ի ձեռն սրբոյ քոց առաքելոց ծա-
նուցեր մեզ ասելով, Թէ զոր կապի-
ցէք ի վերայ երկրի՝ եղիցի կապեալ
յերկինս. և զարձեալ՝ եթէ ումեք
Թողուցուք զվեղս՝ Թող ցին նմա.

Նա որպէս լուար եղեկիայ ի նեղուե-
անձին իւրում ի ժամու մահուան նո-
րա, և ոչ անառես արարեր զաշաչանս
նորա. լուր և ինձ մեղաւոր և անար-
ժան ծառայի քո ի պահուս յայսմիկ։
Քանզի դու ես տէր՝ որ եօթանասե-
նեկի եօթն Թողուլ՝ որք անկանին ի
մեղս, հրամայեցեր քոյին մարդասի-
րութեդ. ապաշաւելով ի վերայ չարեաց
մերոց, և խնդալով ի վերայ դարձի կո-
րուսելոց. Տէր ած մեր՝ որ մտեալ
ի տունն զակքէի ասացեր, այսօր եղև
փրկուէ տանս այսմիկ. դու որպէս մար-
դասէր և բազումողորմ փրկիչ՝ արա՛
և այժմ փրկուէ տանս այսորիկ. զի ոչ
մեծուէ քո, նոյնպէս և ողորմուէ քո։
Նա քեզ փառք և երկրպագուէ. այժմ և՛։

Յայնժամ հէութ ի խաչահայեցն կողմն յոյժ
հիւանդին, և հէութ ի յոտն. և ո՛ւ գնեցին
էհէալ զնէ պաեաարանն ի վերոյ գլխոյ
հիւանդին, և ասէ պաղատիւ։

Ո՛չ ամենակալ՝ արարիչ ամ արարա-
ծոց. որ առաքեցեր յաշխարհ զմիա-

ծին որդիդ քո, որ եկն և փրկեաց
զմեզ ի մեղաց. և բժշկեաց զնա
ախտս և զհիւանդութիս ժողովրդեան
քում: ընկղմեաց զմահ, և փոխեաց
զմեզ ի կեանս և յանմահութիւն: Ու
այժմ աղաչեմք զքեզ տէր ած մեր,
դիր զամենակարօղ աջ քո ի վերայ
հիւանդիս այսորիկ, և բժշկեա զնա
ի ցաւոց իւրոց: Օ՜ի զքեզ փառա-
ւորեսցէ զբժիշկդ հոգւոց և մարմ-
նոց, և խոստովան լինի զահեղ ածուի
քո: զի քեզ վայե՛:

Աղաղո՛ւ ամենայն՝:

Ո՛վ յաւիտենական, որ իջեր ի ստո-
րին կողմն երկրի, և զնորս ծառայել
սիւեցեր յարարածս քո: Ո՛ւրաքեցեր
և զերանելի առաքեալն քո, հրաման
տալով նոցա՝ բժշկել զամենայն ախ-
տս և զհիւանդութիւնս ժողովրդեն
քում:

Ու արդ՝ ես ծառայս քո տկար և
անարժան՝ դնեմ զձեռն իմ ի վերայ
հի-

հիւանդիս այսորիկ, և կարդամ զա-
հել ածուածէ քո, և խնդրեմ յառաջ
բարեբարուածէդ քումմէ: Լուաքեա
զաղաչանաւորդ զորուէ քո, և բժշկեա
զախտս և զհիւանդուածս ծառայիս քո
այսորիկ՝ նշանաւ ամենայաղթ խաչի
քո. որով բարձեր զկարուածէ ազգի
մարդկան, և դատապարտեցեր զըզ-
ձնամին կենաց և փրկուածէ մերոյ:
Օ՛ի դու ես ած մեր, և բժիշկ հո-
գւոց և մարմնոց ծառայից քոց, և
փառաւիչ ամ ահաւորուածեց մերոց:
Այս քեզ ընդ հօր ամենակալի՝ և ընդ
հոգւոյդ Աշխարհի՝ վայելէ փառք իշ-
խանուածիւն և պատիւ. այժմ և՛,

ՔԱՀԱՆԱՊ:

Ա՛ծան հիւանդաց և ամ վշտացելոց՝
աղաչեսցուք զփրկիչն մեր քս, զի ո-
ղորմեսցի՛ ած մեծի ողորմուածէ իւրում.
և բժշկեսցէ զախտս և զհիւանդուածս
հոգւոց և մարմնոց ծառայից՝ իւրոց. և
կատարեալ առող ջուածէ հասուսցէ զա-
մե-

սրկ

մանեսեան ՚ի մշանջենաւոր և յանախատ
կեանս: Ար առաքեցաւ ՚ի հօրէ ՚ի
բժշկուել աղգի մարդկան՝ միածին որ-
դին ՚ոյ, որ մեր և փրկիչ ՚ոյ քո. կե-
ցուսցէ և ողորմեսցի:

Ընդ.

Փարատեցո՛ ղցաւս և բժշկեա՛ զհի- քՀ
ւանդութիս ՚ի ժողովրդենէ քումմէ
որ ՚ած մեր. և շնորհեա՛ ամենեցուն
զկատարեալ առողջուն նշանաւ ամե-
նայաղթ խաչի քո. որով բարձեր ըզ-
տկարութիւն աղգի մարդկան, և դա-
տապարտեցեր զթշնամին կենաց և
փրկուեր մերոյ: Դո՛ւ ես կեանք մեր և
փրկութի՛ւն՝ բարերար և բազումողորմ
՚ած որ միայն կարօղ ես թօղուլ զմեղս,
և մերժել զախտս և զհիւանդութիս ՚ի
մէնջ. որում յայտնի են պէտք կարեց
մերոց: Պարգևիչդ բարեաց՝ պարգևեա՛
դառատ ողորմուն քո ՚ի վերայ աղա-
րտածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտո-
ւից. յորոց հանապազ փառաւորել գո-

վի ամենասուրբ Երրորդութեն։ Այժմ և միշտ և՛։

Հաւատոյ

սրկ Խոնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի Տէն՝ զի զղջմունեամբ զհնորհս իւր պատասցէ ի վերայ մեր։ Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

Կեսո՞ տէր։

Աղօթք։

քհ Հայցաւուր խաղաղութեամբ՝ օգնականն և փրկիչ անձանց մերոց՝ քո՞ւ մեծ մեր։ Պարսպել պահեա զԺողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո ի խաղաղութեան։ փրկեա յերեսաց թշնամեացն։ Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հո՛։

Հայր մեր որ յերկ՛։

Ասլան խաչալուայ առնելոյ, որ կոչի Ասլահանգիստ։

Ես՝ մի սրտմտուիլ քով յանդիմաներ զիս. և մի բարկուիլ Թեամբ քով խրատեր զիս։ Ազդմեա ինձ տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։ Ընձեն իմ յոյժ խռովեցաւ, և դուն՝ մինչև յե՞րբ։ Դարձ տէր և փրկեա զանձն իմ. կեցո զիս տէր՝ ըստ ողորմութեանդ քումմէ։ Զի ո՛չ ոք է՝ որ ի մահու յիշէ զքեզ. կամ ի դժոխս խոստովանի առնիցի առ քեզ։ Աստակեցայ ես ի հեծուծանէ իմմէ։ Լուացի զամ զիշեր զմահիճս իմ։ և արտասուօք իմովք զանկողինս իմ Թացի։ Աստվեցաւ ի սրտմտութենէ ակն իմ։ և մաշեցայ ես ի վերայ ամ Թշնամեաց իմոց։ Ի բաց կացէք յինէն ամենեքեան. զի զօրծէք զանօրէնութիւն։ Լուաւ տէր

ձայնի լալոյ իմոյ. լուաւ տէր աղօթից
իմոց, և որ ընդունելոցն իմ ընկալաւ։
Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամ
թշնամիք իմ։ դարձցին յետս և ամա
չեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

Հ. ՀՐԱՀԱՆ։

ա Պաւինեցաք ի խաչ քո՞ արարիչ յա
ւիտեանից. որ եռուր մեզ պահապան
յաղթօղ ընդդէմ թըշնամոյն. աղա
չեմք սուաւ փըրկիչ պահպանեա զան
ձինըս մեր։ Յարձրեաւ Թագաւոր
որ վասըն մեր եղեր ի խաչ. և բար
ձեր սուաւ ղյանցանս նախաստեղծին
ադամայ. ա՛։ Գլուխս սուրբ հաւատոյ
և փայտ կենաց մարդկան յայտնեալ.
ղոր տեսեալ այսոյն պղծոյ կործանե
ցաւ անկանգնելի. աղա՛։ Ողացա՛
Թշնամին ընդ յայտնիլ սրբոյ խաչին.
և ի յահէ փառաց նր կործանեցաւ
յանդունդս երկրի. աղա՛։

ո Ահեղաք մինչև յերկինս և զարդա՛ր
ըն՝ղցասումըն քո՞ շարժեցաք ի մեզ՝

տէր ըստ մեծի քումդ ողորմութեանդ ո-
ղորմեա՛ մեզ։ Արդ՝ մինչ ի դիմաց խա-
ընկղմեալք՝ յանօրէնութեանս մերում.
որ յիշեա՛ ողորմութեանդ քոյ
և ողորմեա՛։ Հալածեա՛ ի մէնջ որ-
ընշանա՛ խաչի քո զընդիմամարտ և
զանեղութիւն գազա՛նն. և մի տար յա-
պականութիւն զքո ժառանգութիւնս։
Փառ հօր և՛։ Տաճար լուսոյ անըստ-
ւերին՝ և առաքեալս անձառ բանին՝.
որ ընդ նախնւոյ մօրն ևայի՝ բարձեր
զանեծսըն տըրտմալի՝. Հայեաց յոր-
դւոյ քո միածնի՝ հօր հաշտուեցաւ մի-
նորդի՝. բառնալ ի մէնջ ընդխռովու-
թիւն՝ և տալ զոգւոյն զխաղաղութիւն։
Այժմ և միշտ և՛։ Արկինըք ցնծութեան
և երկիւղ ուրախանայր՝. քանզի փըր-
կիչ ցուցաւ սուրբ խաչն և լուսատու
տիեզերաց աղ՛։

Զայն տեառն ի վերայ ջուրց, և աճ-
փառաց որոտաց, և տէր ինքն ի վերայ
ջուրց բազմաց։ Զայն ահն զօրութեան, և
ձայն ահն մեծ վայելչութեան։

Ընդերցուածս ՚ի չորրորդ Նոգեւոր օրուէս։

Եւ ասեն արք քաղաքին ցեղիսէ. ահա հաւասիկ բնակուէ քաղաքիս բարի է, որպէս և տէրդ լսէ տեսանէ. և ջուրքս չար, և երկիրս անզաւակ։ Նա ասէ եղիսէ. առէք առէք կուժ մի նոր, և դիք այդր։ և բերին առնա. և եկ եղիսէ յականս ջուրցն, և արկ անդր աղ և ասէ՝ այսպէս ասէ տէր. բժշկեմ զջուրսդ զայդոսիկ, և մի ևս լիցի այտի մահ և յանզաւակուէ։ Եւ բժշկեցան ջուրքն մինչև ցայսօր ըստ բանին եղիսէի զոր խօսեցաւ։

Ա՛լէ՛՛ ալէ՛՛։ Ասուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։

Սէյ Ա՛ռ՛՛ջնո՛՛ Յէ՛ Վէ՛՛ որ ըստ Յօհան՛՛։

Ի վերջնում աւուր մեծի տօնին, կայր յիսուս՝ աղաղակէր և ասէր. եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս՝ և արբցէ։ Որ հաւատայ յիս՝ որպէս

և ասեն գերբը, գեռաք յարովայնէ նորա բղխեսցեն ջրից կենդանուեւ: Այս ասեր՝ վասն հոգւոյն զոր ընդունելոց էին որ հաւատային ի նա:

Վասպուր

Ողջեսցուք զմարդասէրն Աճ, որ է յոյս և ապաւէն անձանց մերոց. որ զամենայաղթ նշան սուրբ խաչին շնորհեաց մեզ զէն անպարտելի ընդդէմ ներգործուեց սատանայի. զի զնմ ինչ՝ յոր և մերձեսցի սա, սրբեսցէ. մանաւանդ զջուրս զայս. և շնորհեսցէ սովաւ բժշկութի ախտից, և փարատուիմըն ցաւոց: Ողջակէզ տեր Աճ մեր կեցուսցէ և ողորմեսցի:

Ողբեր:

Տէր Աճ ամենակալ՝ արարիչ ամ աբրաածոց, որ զգեցար մարմին ըստ մեծի խորհրդոյն կենդանեաց, և ի լուացումն մեղաց սրբեիչ և մաքրիչ զջուրս կացուցեր. որ և ի ձեռն մարգարէին

եղիսեի օրհնեցեր զջուրն չարաշունչ
և մահաբեր. և այժմ տէր բարերար՝
առաքեա՛ զշնորհս հոգւոյդ սրբոյ ՚ի
ջուրս այս, և օրհնեա՛ ❁ անեղեւոյթ
աջով քովւ և զօրութեամբ ամենայաղթ
խաչի քո։ Տո՛ւր սմա շնորհս. զի ամե-
նեքին որք արբցեն ՚ի սմանէ՝ եղիցի
նոցա ՚ի բժշկութիւն ախտից՝ և ՚ի փարա-
տումն ցաւոց։ ()րհնեա՛ տէր ❁ զջուրս
զայս զօրութեամբ աւր խաչի քո. զի հօտք
և խաշինք որք արբցեն ՚ի սմանէ, ե-
ղիցի նոցա յանցաւորի և ՚ի ծննդական
նուէր։ ()րհնեա՛ աւր ❁ զջուրս զայս
նշանաւ սուրբ խաչիս ՚ի ձեռն քահա-
նայիս՝ և խնդրուածոց ժողովրդեանս
զի ուր ցօղեսցի ՚ի տունկն և ՚ի բոյս,
եղիցին անվնասաբեր ՚ի ժանկոյ և ՚ի
թրթրոյ՝ և յամ պատահարաց. և ա-
ռաւել ևս պտղաբերեսցին ՚ի շահա-
կէտութիւն որդւոց մարդկան, և ՚ի սպաս
պաշտամանն քումմէ Այլ զորհանալով
փառս մատուցանեմք քեզ ընդ հօր
և ընդ ամենասրբ հոգւոյդ այժմ և՚։

Ամէն, ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Օրհնեսցի և սրբեսցի ջուրս այս նըշանաւ սուրբ խաչիդ և սուրբ աւետարանաւ, և աւուրս շնորհիս, յաւուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ:

Աբեղա անձամ աստ՝

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ՝ Սբ խաչիս ազդ՝ պահպանիչ և՝ հայր մեր որ յերկինս՝

Աբեղա ասէ ընդ խաչելոցն, Ա՛ստ և աստ խաչեսցի:

Ղեմամբ արեան սրբոյ քո վերկայիցն հաշտեաց ընդ մեզ քրիստոս՝ և փրկեա՛ յամէ փորձուէ՝ Որք նահատակեցա՛ն վասն քո՝ ի մահ՝ վիրաւորեալք յաղեցեցին թշնամւոյն՝ սոյին աղաչանօք հաշտ՝ Որք միացան ի սէր ահաւոր քո տերութեանդ՝ և մատուցին զանձինս իւրեանց պատարագ քեզ և զհնուն՝ ստ

Կանոն Հոգեհանգիստ Կատարելոյ։

Երանի որ խորհի զաղքատն և զըչ-
նանկ. յաւուր չարի փրկէ զնա
տէր։ Տէր փրկէ զնա և կեցուցանէ.
երանելի առնէ զնա ի վերայ երկրի.
և ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց
իւրոց։ Տէր օգնական է նմա ի մա-
հիճս ցաւոց իւրոց. և զամ անկողինս
նորա դարձուցանէ ի հիւանդութեն
նորա։ Ես ասացի տէր ողորմեա ինձ.
բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։
Թշնամիք իմ ասացին ինձ չար. Երբ
լինի՝ զի մեռանի, և կորիցէ անուն նո-
Ա՛տանէր տեսանել զնան ուրուն, խօսէր
ի սրտի իւրում, և ժողովէր զանօ-
րէնութիւն յանձն իւր։ Ելանէր
և զնոյն խօսէր. զինչն շշնջէին ամ
թշնամիք իմ։ Ընդ իս չար ի վե-
րայ իմ։ բան անօրէնութեան եդին ի վե-
րայ իմ։ Ա՛ի թէ որ ննջիցէն, և այլ

Ոչ ևս յաւելցու յառնել քանզի ե
սպրն խաղաղանէ իմոյ, յոր և ես յու
սացայ։ Որ ուտէր զհաց իմ, յաձա
խեաց առնել ինձ խաբէութիւն։ Ա.յլ
դու տէր ողորմեա ինձ, և կանգնեա
զիս. և ես հատուցից նոցա։ Այսմ
ծանեայց՝ թէ հաճեցար ընդիս, զի մի
ուրախ եղիցին յիս թշնամիք իմ։ Ա.յլ
զիս յամբծութենէ խոնհ ընկալար. և
հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։
Օրհնեալ տէր ած իսրայէլի յաւի
տեանս յաւիտենից. եղիցի եղիցի։

Ա.ղերս։

Որպէս փափագի եղջերու յաղբերս
ջուրց, այսպէս փափագի անձն իմ առ
քեզ ած։ Նաւարաւի է անձն իմ առ
քեզ ած հզօր և կենդանի. ե՞րբ եկից
երևեցայց երեսացդ այլ։ Եղե՛ն ինձ
արտասուք իմ կերակուր ի տուէ և
ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօր
հանապազ՝ Թէ ո՞ւր է աստուած քո։

Օ այս որպէս յիշէի, տառապէր յիս
անձն իմ: քաջալերելի զի մահից ընդ
յարկաւ սքանչելեացս տանն աստուծոյ:
Ի ձայն ցնծութեան խոստովանութեան, և
ի ձայն բարեկենդանութեան: Ընդ ընդ
դէմ ըմբռնում ես անձն իմ, կամ ընդ
դէմ խռովես զիս. յուսա առ Աստ խոս
տովանեա նմա՝ փրկիչ երեսաց իմոց
Աստ է, Ընձեռն իմ յոյժ խռովեցաւ. վա
յասորիկ յիշեցի զքեզ յերկրէն յորդա
նանոյ, ի հերմոնէ ի լեռնէ փոքուէ:
Ստորք ի խորոց կարդացին առ քեզ
ի ձայն սահմանաց քոց: Ամենայն զբօ
սանս քո և ալիք քո անցին ի վե
րայ իմ: Ի տուէ պատուիրեաց տէր
ողորմութիւնն իւր, ի գիշերի զօրհ
նութիւն նորա. և աղօթք իմ առ Աստ
ուած կենաց իմոց: Ասացի ցընդու
նելի իմ ես. ընդէ՞ր մեծաձեալեր զիս,
ընդէ՞ր արտաւմ գնամ ես ի նեղել
թշնամւոյ իմոյ: Ի փշրել ոսկերաց
իմոց նախատեցին զիս թշնամիքն իմ.
յասել ցիս զօրհնանապազ, Թէ ո՞ւր է

ած քո։ Կրկ՝ ընդէր տրտում ես ան-
ձըն իմ, կամ ընդէր խռովես զիս. յու-
սա առ ած, խոստովանեա նմա՝ փըր-
կիչ երեսաց իմոց ած ես։

Կ՚ելե՛ւ ալէլո՛ւիա։

Պատառ արա հնձ ած, և իրաւ աքա՛։
փառ հօր և՛։ Կ՚յժմ և դէմ՛։
Ողորմեա հնձ ած ըստ մեծի ո՛ղ՛։
փառ հօր և ո՛ղ՛, Կ՚ե և հաղ՛։
Խոհակ ալիանէ և ուխ, Օրհնուէ և՛։
Կ՚ե ասէ Հ՚արհան. Գձ։

Ո՛ր երկայնամիտդ ես տէր. քաղցր
և անխոնարհ. հանգոյն զհոգիս քոց ծա-
ռայից, զի՞ մի դարձցի՛ տնտանիմ ամա-
չեցեալ յաւուր ահեղատենի՞ն։
Ո՞չ յիշատակ հրաժարեալ ոգւոյն՝ ի հա-
ճոյ քեզ ընկալցիս. և շնորհս մեր
ընկալ ո րպէս զաբէլին՝ զնոյն՞ն և
զաբարկիէլն՝. զի՞ մի՝ ի՝ խորան քոյ
սիրոյդ հանգուսցես ընդ Տաւթայ քո՞.
և զհոգիս նո՞ցա դասեսցես ընդ-ա՞ր ըս

ա–փ
ղէ՛ Ո՛հաւատ ես Թագաւոր քրոջէկական
ձայնիւ օրհնել՝. ի, յերկինս ի յերկ-
րի և յամմ ժամանակի՛: Ո՛հաւատ ես
Թագաւոր որ նորոգես զքո զարա-
բածս՝. հաստատես ի, հաւատաս ի,
գիտուն ձրշմարտուե՛: Ո՛ուսաւորեա
ըզ մեզ քս ի միւսանգամ քո գալըս-
տեանդ՝. յորժամ ծագիս ի յերկնից
և նորոգես զքո զարաբածս:

յա՛ Ո՛յսօր յարուԹիւն քի ուսնեցեք հա-
ւատացեալք՝. ի մի՛ ըշխ հայր ա-
մենակալ: Ո՛յսօր և կանայք խղաճ-
բե՛լք աւետիս տալով առաքելոյն.
օ՛՛րհնեն զըշխ հ՛՛: Ո՛յսօր և հրեշ-
տակք ի յերկինըս հոգևոր հընչմամբ
երգով օ՛՛ր

դճ Ո՛ոյս լուսոյ մայր և կենաբար բանին
բնակարան. քեզ երանելոցն աղջ և ա-
զի՛նք ամե՛նայն: Ստեղծողի՛ն մայր
և հնուե կերպի նորոգողի՛ն. քեզ երա՛
Ո՛ոյս ծագեցաւ ի քէն՝ նըստելո՛յս
ի խաւարի. քեզ երանի՛:

եչ Վայտ կենդանց որ ի խոխանակ մահացու

պըտղո՞յն ը զքրիստո՞ս պըտղաբերե-
ցե՞ր. պարսպեա՛լ պահեա զո՛ւխտս հա-
ւատացելոց։ Վա՛հ բացաւ մեզ. Ձա-
նապարհ ծառոյն կենաց՝ ի սրօքեա-
վակ պահպանուեա՛ն նեն. պարըսպեա՛լ
պահ։

Փաւ հօր և որ՛։

Վա՛հ ազատե՛ցաւ նախահայրն ի Ձա-
շակմանէ պըտղո՛յն. և՛ քեզ երկըրպա-
գեն ամենայն հաւատացեալք՝ պա-
րըսպեա՛լ պահ՛։

Յամ ժամու աղաչանք իմ այս՛։

Նա ևս կոպ՛։ Աղաչեսցուք զկենսա-
տու փրկիչն մեր քա՛. որ կամաւոր խա-
չե՛լուքն իւրով զարարածս փրկեաց.
և հեղմամբ արեան իւրոյ զԹողութե՛ն
շնորհեաց յոյսացելոյ իւրոց. ամե՛ն։

Աղօթ։

Ընկեալ առաջի քո բարերար և բա-
զումողորմ ա՛ծ՝ աղաչեմք ամենայն սըր-
տիւք մերով, և խնդրեմք զԹուե՛
ի քէն. որպէս խոստացար ծառայիդ

քոց և ասացեր, զմեզ զոր ինչ խնդրիցեք քաւ հաւատով յանուն որդւոյ ի հօրէն, տացի ձեզ: Ընդ որհեա և այժմ հաւատացեալս ի քեզ, և կատարեա ի բարի զխնդրուածսն որ ունին ի քեզ եմք ամենայնի: Եւ զի առաջի ողորմութեդ մխիթարեա զմեզ ի կեանս այսորիկ. և առաջնորդեալ հասո յանձառ երկնից արքայութիւնդ, ի փառաբանուի և ի պատիւ ամենասուրբ երրորդութեդ: այժմ և:

Յեչէ՛ Տէր և ողորմեա:

Կարերար և բազում ողորմ ած՛:

Ա՛ելոյա ալէլուիա:

Ահա ած օգնական իմ, և տէր ընդունող հոգւոյ իմոյ:

Ընդ ելոյա՛ած Յոհաննէսյ:

Պատուեա զքեզ ի քոյոց արդար վաստակոց. և հան նմա պտուղ ի քոց արդարութեն արմտեաց. զի լցցին ըշտեմարանք քո լիութեբ յորենոյ. և գինեաց հնձանք քո առատեալ ևս բղխեսցեն, Ո՛րդեակ մի լքանիր ի խրատու ան և մի լուծանիցիս յանդիմանեալ ի

նմանէ։ Օ՜ի զոր սիրէ տէր՝ խրատէ, տանջէ զնմ որդի զոր ընդունի։

Ընդհանուր ի գործոց ապաշխարութեան։

Ա՛նպէս պաշտեմ զՀայրենի ծնո՛ղս, հաւատացեալ յամի որ ինչ յօրէնս և ի մարգարէսն գրեալ է։ Ուսիմ յոյս առ ձեզ և առ մարդիկ, որում և դոքա ակն ունին՝ թէ յարուսեալ լինելոց է արդարոց և մեղաւորաց։ Յորում և ես իսկ ձգտիմ, անխիղճ միտս ունելով առ ձեզ և առ մարդիկ։ Ի բաղում ամաց եկի ողորմութիւն առնել յաղգդ իմ, և եղուր պատասխանիս. որովք գտին զիս սրբեալ ի տաճարին։

Պէտքն ապաշխարողին ի Աստուածէշտոյն խնդրոյն և ընդհանուրք։

Սիրելիք, զսոյն իսկ և մեռելոց խոստացեալ է՝ զի դատեսցին մարդկան մարմնով. և կենդանասցին ըստ այլ հոգւով։ ամենեցուն վախճան մերձեալ է. զգաստացարուք այսուհետև.

և լերուք զուարթունք յաղօթս։
Անէ՛ ալէ՛, ընծ ողորմեա մեզ ե՛։

Աբ ընդ՞ երկիր ձեզ ՚Ի՛ր ոչ ըսա Ղ՞ա՛։

Եւ մահաւ շրջէր ընդ երիքով։ Եւ ահա՝ այր մի անուն կոչեցեալ Զաքէոս. և նա էր մաքսապետ. և ինքն մեծատուն. և խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ իցէ Յիսուս, և ոչ կարէր ՚ի բազմութենէ, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յառաջ, ել ՚ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա. քանզի ընդայն իսկ անցանելոց էր։ Երբև եկն ՚ի տեղին. հայեցաւ ՚ի վեր յա՝ և ասէ ցնա. զաքէ՝ փութա՝ էջ այսր, զի այսօր ՚ի տան քումմ արժանի լինիմ ագանել։ փութացաւ և էջ՝ և ընկալաւ զնա ուրախութեամբ։ Երբև տեսին ամենքին, տրտունջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Եւկն եկաց Զաքէոս՝ և ասէ ցՏէր. Տէր՝ ահա զկէս ընչից իմոց տամ աղքատաց. և եթէ զոք զբռնակեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա

ցնա յա՛. այսօր եղև փրկուԹի տանս
այսմիկ. քանզի և սա որդի աբրահա-
մ՛ու էր. Օ՛ի եկն որդի մարդոյ խընդ-
րել և կեցուցանել զկորուսեալն։
Ա՛ման ՚ի վերուստ խաղաղուԹի՝ և փրկուԹի
անչափ մեծոյ ա՛՚։
Նայր երկնաւոր՝ բարեգուԹիւն ողոր-
մած, քաշյր և երկայնամիտ առ ամե-
նեսեան որք խնդրեն ՚ի քենե։ Նա-
յեաց ՚ի ստեղծուածս ձեռաց քոց, որ
ապաւինիմք ՚ի քո բարերարուԹիդ. և
ընկալ ողորմուԹիւ քով զպատարագս,
զոր մատուցանեմք հաւատացեալքս ՚ի
քեզ՝ առ ՚ի յիշատակ ննջեցելոց յա-
նուն քո սուրբ։ Օ՛ի դու ես տէր՝ որ
հաստատեցեր ՚ի սիրտս մեր զյոյս յա-
րուԹե, և զհատուցումն բարեաց ա-
մենեցուն՝ որ հաւատան գալստեան
միածնի քո։ Նու ամ մեր, յաղ-
ԹեալՀ ՚ի մարդասիրուԹենէ քումմէ՝ ա-
ռաքեցեր յանքննելին ծոցոյ քումմէ զը-
միածին որդիդ քո. որ եկն և գնեաց
զմեզ ՚ի ծառայուԹենէ մեղացն։ Նզև իբ-

րեւ զմեզ մարդ, և հրաւիրեաց զմեզ յորդեգրուի հօրդ երկնաւորի: Ա՝ատոյց զինքն պատարագ կամօք բովք, և եբարձ զպարտիս մարդկուես մերոյ, հաշտեցուցանել զտարագրեալքս ի քէն՝ ի ձեռն հեղման արեան իւրոյ: Համարեցաւ ընդ մեռեալս՝ ի գերեզմանի դնելով անապականաբար, և զմահացեալսն իսկզբանէ՝ կորզեաց ի ձեռաց մահու: Յարեաւ աքանչելապէս, և մշանջենաւոր կենդանութեն հաղորդս արար զմահկանացու բնութիւնս մեր: Նա այժմ տէր ամ մեր՝ օրհնեա զպատարագս զայս, առաքելո՛ զաներեւոյթ աջ քո. և հանդիպակամս ընդունել քո ի մատուցողքս. որք հաւատացին առհաւատչեայ ընդունել զհանգիստ փոխեցելոյն, զոր աւանդեցեր ի պատրաստ բնակուի՝ քո անձառ բարեացդ: Այո տէր՝ քո անձառ շնորհօքդ, և բազմապատիկ ցնծութ զժողովուրդս քո, որք հաղորդ հանդիպեցան լինիլ այսմ հնգեւոր խոր-

րախտեաս Ծառայեսցին ընդ մեզ պա-
րակուճք բանակք զուարթնոցն, բազ-
մելոյ ի վայելս հաշտարար կամաց
քոց, Որպէս զի երկաքուռիք հրձուա-
նօք քերկրեսցին հոգիք հանգուցելոցն
աղաչմամբ շնորհաց սուրբ հոգւոյդ, որ
անզգիղ ես ի փոխատրուել նոցա՝
որք կամարար մնօք ընծայելոյն զքոյդ
քեզ, Պայծառացո՛ տէր աննուաղելի
փայլմամբ վկայիցդ այնոցիկ, յորոց ա-
նուն կատարին ալօթքս և պատարագս՝
բարեխօսութ ընտրելոց քոց, որք մա-
տուցին զինքեանս արեամբ բանակա-
նաւ քեզ ընդունողիդ հօր, և յանտես
սանելի քոյ հատուցմանդ վայելեսցեն
՛ի փառս՝ որ ոչն երևին Ամէն ո-
րոյ գոհացողական փառատրութեամբ
և երկրպագութեամբ մատուցանեմք
օրհնութիւն ամենասուրբ երրոր-
դութեանդ՝ հօր և որդւոյ
և հոգ՛ւ
Դոյդ ձեր որ յեր՛ւ

Կանոն Աղ Օրհնելոյ։

Աստ ողորմած մեղ և օրհնեա զմեզ. երևեցո դերեսս քո ի մեզ՝ և ողորմեա մեզ։ Ա՛նսահման յերկրի զձանապարհս քո, յամենայն ամ ըզփրկուելս քո։ Խոստովանեղիցին առ քեզ ժողովուրդք ած, խոստովանեղիցին առ քեզ ժողովուրդք ամ։ Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք. զի դու դատես զժողովուրդս ուղղութ. և ազգաց երկրի դու առաջնորդես։ Խոստովանեղիցին առ քեզ ժողովուրդք ած. դոհասցին զքեն ժողովուրդք ամ։ Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ ած ած մեր։ Աստ մեր օրհնեսցէ զմեզ, և ի նմանէ երկիցեն ամ ծագք երկրի։

Նա առ Հոգեւոր. դկ։

Եւ է Ա՞ր բուսնակեա՞լ պահեին յանեղաշէ՞ն դրախտի՞ն ըզձանապա՞րհս ծա՞ռ

ուսյն կե՞նաց՝ քրօքեակա՞ն հոյլ-
քըն բոյեղե՞ն սրօբե՞ւք. այ՞օր ար-
տափյլեալ ցուցար յերկրի ծաղիրդ
փայտ կենա՞յ և փրկուե՞ ղքեզ օրհ-
նեն մանկա՞նըք սուրբ եկե՞ղե՞ցւոյ՝
Ա՞քեակ՞ ծառայն վերաբերեա՞լ խոյ
յո՞ղջակե՞ղ փոխանա՞կ ի՞սահա՞-
կայ. այլ ի՞ վերա՞յ քո կենա՞ գահն
անա՞րատ. ի՞ հաշտուե՞ հօր և՝ի բառ-
նա՞լ ըզմե՞ղըն՞ մեր՝. ղքեզ պար-
ծանըք պօղոսեա՞ն. դաւանեալ ըզքեզ
ծածկին բանին տեղի՞ և զե՞նա՞րան՝.
քանզի՞ քե՞՛ւ ապրեցաք՝ ի խաճա-
նօղ և յանմարմին գազա՞նէ՞ն. և՝ ի՞
վերայ քո հեղեա՞լ շիթք անապական
արեանն՝ ը՛զկողածնի՞ն ջըն ջեաց ը՛զ

մեղս. ղքեզ.

Վ՞ասպս. Լ՞ուսից տէր ձայնի աղա-
չանաց մերոյ՝ ընկալ՛ի զխնդր՛ո՛ւ
Աղօ՛ւ. Ո՛րհնեալ ես տէր ած ամե-
նակալ, արարիչ ամ արարածոյ. որ ա-
րարեր զամ արարած քո բարի և լաւ, և
չի՛ք ինչ խոտան՝ ի նմա. զոր եառուր

ի պէտս որդւոց մարդկան։ Որ և ա-
րարեր զայն ի հաստատուէ երկրի
և ի ժողովոց ջուրց։
Նա արդ՝ մեք հաւատացեալքս ա-
նուան քումմ սրբոյ, առեալ զպար-
գեւս քո՝ զոհանամք զառատ ողորմու-
թեդ քումմէ, և փառաւորեմք զա-
մենամեծ տէրութիւն քո։ Որհնեա ☩ որ
ողորմութիւդ քո զպաղ զայս։ Որհնեա
☩ տեր ողոր՛ զպաղ զայս։ Որհնեա
☩ տեր ողոր՛ զպաղ զայս։ Օ՛ի ամ
ինչ՝ յոր և խառնեսցի սա, եղիցի մեղ
ի սրբութիւն ի քաւութիւն և ի թողու-
մեղաց, և յառողջութիւն հոգւոյ և մարմ-
նոյ։ Որպէս զի հաստատեալք սովա-
և զուարճացեալք, յամի անդադար
փառաւորեսցուք զՏէր և՛։
Որհնեսցի և սրբեսցի աշ այս նշա-
նաւ ՚ի խաչիս և ՚ի աւետարանաւս
յաջոյն հօր և որդւոյ՛։ Ընկալ հղիեա՛։
Ո՞հեղ խորհուրդ քահա՞նայ՛։
Հոգւոյն հանգուցե՛։ Վրիստոս որ՛։
Հայր մեր որ յերկինս՛։

(Ա՝ապաղ օրհնելոյ)

Կանոն՝ Տեառնական մատաղ
Օրհնելոյ։

Ընծան պղինձէ և պճնազգեստ Ջուարճին
՝ի պատառն եկեղեցւոյն և առնեն սաղմոս։

Երանի ումմ Թողուն Օրհնեցից զՅՀՌ
յամ ժամ։ Ողորմեա ինձ աստ։ ՅՀՌ
վայելէ օրհնուէն։

Սրբեսուգին չորսդէն։ Ան ևս խաշմ՝։
Ան փոխանայն առէ։ Օրհնուէն և ի առք՛։

Ան ապա՝

Ելէ՛ աղէ՛։ Յիշեա տէր զդաւթի և
զամ հեզուէն նորա։ Որպէս երդուաւ
տեառն և ուխտս եառ ՅՀ յակոբայ։

Ընթերցուածք ՚ի Պաւղոսէ։

Ան կոչեաց տէր զմօսէս, և խօ-
սեցաւ ընդ նմա ՚ի խորանէ
անտի վկայուէ՝ և ասէ. խօսեաց դու
ընդ որդիսդ իսրայէլի, և ասասցես
ցդոսա։ Այր որ ՚ի ձէնջ՝ թէ մատուս
ցանիցէ պատարագ ՚ի խաշանց. յար-

ջառոյ կամ յոչխարէ մատուցանիցէք զպատարագս ձեր։ Եթէ ողջակէզ լիցէ պատարագն նորա յարջառոյ արու անարատ մատուսցէ առ դուռն խորանին վկայութեան ածցէ զնա. ընդուսնելոցէ ի նմանէ առ ի քաւել ա ռաջի տեառն։ Եւ դիցէ զձեռն իւր ի վերայ գլխոյ ընծային, յընդունե նելոյ Թիւն նմա. առ ի քաւելոյ վե րանձին իւրոյ։ Եւ սպանանիցեն զզուա րակն առաջի տն. և մատուսցեն քա հանայք որդիքն ահարօնի զարիւնն. և հեղցեն շուրջ զսեղանովն՝ որ կայ ցէ առ դրան խորանին վկայութեան։ Եւ մերթեսցեն զողջակէզն. և ան դամ անդամ յօշեսցեն զնա։ Եւ դիցեն որդիքն ահարօնի քահանայք հուր ի վերայ սեղանոյն. և կուտեսցեն փայտ ի վէր հրոյն. և դիցեն որդիքն ահա րօնի քահանայք։ Օ անդամն Թիւ. և զգլուխ՝ և զձարպն ի վէր փայտին. որ կայցէ ի վէր հրոյ սեղանոյն։ Եւ զփո րոտին և զոտս լուասցեն ջրով. և դի

ցեն քահանայք զայմ՝ ի վեր սեղանոյն.
զի ողջակէզ զոհի ե՝ ի հոտ անուշից
ան. Ա՝պա թէ յոչխարաց ելցէ պատա-
րագն այդ, ի գառանց և յուլոց յողջ-
ակէզ, արու անարատ մատուցանիցէ
նա։ Եւ դիցէ զձեռս իւր ի վեր գըլ-
խոյ նը. և սպանցէն զնա ի կողմանց
սեղանոյն ընդ հիւսիսի, առաջի տն. և
հեղցեն քահանայքն որդիքն ահարօնի զա-
հանայք շուրջ զսեղանովն։ Եւ յօշեա-
ցեն զնա անդամ անդամ. և զգլուխն
նորա և զճարպ. և դիցեն զայն՝ քա-
հանայքն ի վեր փայտին և հրոյ՝ որ ի
վերայ սեղանոյն ելցէ։ Եւ զփորոտին
և զոտս լուասցեն ջրով. և մատուսցէ
քահանայն զայմ և դիցէ ի վեր սեղա-
նոյն. զի ողջակէզ զոհի ե՝ ի հոտ ա-
նուշից տն։

Ընդ ընծայատուն յանդէտ ի՝ագատարուէից։

Եւ մատոյց դաւիթ ողջակեզս ա-
ռաջի տն՝ և խաղաղականս։ Եւ
իբրև կատարեաց դաւիթ մատուցա-

նել զողջակէզսն և զխաղաղականս՝
օրհնեաց զժողովուրդն յանուն տեառն
զօրուեց։ Եւ քաշխեաց ամ ժողովր-
դեանն. յամ զօրուե իսրայիլի ՚ի դա-
նայ մինչև ցբերսաբէէ. յառնէ մինչև
ցկին իւրաքանչիւրումք բլիթ մի հա-
ցի. և պատառ մի կասկարայից և քա-
քար մի ՚ի տապակէ. և գնաց ամ ժո-
ղովուրդն իւրաքանչիւրք ՚ի տուն իւր։

Ընդէղծոածս այծոյէայ Մուգպղէէ։

Եւ զամենեսեան՝ որք պահէին ըզ-
շաբաթս իմ, և ոչ պղծէին. և
կայցեն յուխտին իմում։ Տարայց զնա
՚ի լեառն սրբութե իմոյ. և ուրախ ա-
րարից զնա ՚ի տան աղօթից իմոյ. ող-
ջակէզք նորա՝ և պատարագք նոր ընդ-
նելիք լիցին ՚ի վերայ սեղանոյ իմոյ. զի
տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամ
հեթանոսաց ասէ տէր։

Պօղոսի առաքելոյն յՀբրայեցւոց նամակէն
ընթերցուած։

Ունիմք մեք սեղան, ուստի ոչ գո՛ն
ղիշխանութիւնն Ճաշակել, որք

պաշտեն զպաշտօն խորանին։ Օ՛ի ո-
րոց անառնոյ մատչիւր արիւնն ի սըր-
բուհին վասն մեղաց ՛ի ձեռն քահա-
նայապետին, նոցունց մարմինքն այրէին
արտաքոյ բանակին։ Ա՛սոր որոյ և յի՛ն
զի սրբեսցէ իւրով արեամբ զժողո-
վուրդն, արտաքոյ դրանն չարչարե-
ցաւ։ Ա՛րդ՝ եկայք ելցուք առ նա ար-
տաքոյ բանակին. առեալ յանձն զնա-
խատինս նորա։ Վ՛ասնզի ո՛չ եմք ու-
նիմք զքաղաք՝ որ աստէն մնալոյ ի-
ցէ. այլ զՀանդերձեալսն խնդրեմք։
Ա՛րդ՝ ՛ի ձեռն նորա մատուսցուք ըզ-
պատարագ օրհնութե՛ն յամ ժամ այ. այ-
սինքն է՝ պտուղ շրթանց խոստովանո-
ղաց յանուն նորա։ Օ՛ բարերարութե՛ և
զհաղորդութե՛ մի մոռանայք. զի ընդ
այսպիսի պատարագս հաճի Ա՛ստուած։
Ա՛լէ՛լ ա՛լէ՛։ Ա՛ստուցէ՛ք ինն ո՛րդիք
այ. մատուցէ՛ք ինն զորդիս խոյոց։
Ա՛ստուցէ՛ք ինն զփառս և զպատիւ.
մատուցէ՛ք ինն զփառս անուան նորա.
երկի՛րպագէ՛ք ինն ՛ի սրահ սրբութե՛նէ։

Աւետեաց Ողբեր.
Սիա՛ռ ողբ յՅե՛ր ողբ ոսկ՚ոռոս։
Տեառն մերոյ Յե՛ր՝ Յե՛ր։

Ա՛սէ և ցկուչնատէրն. յորժամ առնիցես զաչս ձաշ՝ կամ ընթրիս, մի կոչեր զբարեկամն քո. և մի զեղբարս քո. և մի զազգականս քո. և մի զդրացիս քո. և մի զմեծամեծս. զի մի և նոքա փոխարէն կոչիցեն զքեզ՝ և լինիցի քեզ հատուցումն։ Ա՛յլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս՝ զխեղդս՝ և զկաղս՝ և զկոյրս։ Այ երանելի լինիցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ. և հատուսցի քեզ փոխարէն ի յարուցեալ արդարոց։ Եթէ լուաւ զայս ոմն ի բազմականացն՝ ասէ ցնա. երանի՛ որ կերիցէ հաշ յարքայութեան։

Կ՚ելլ Ա՛ռ ուղեւոյ զ՚։

Ա՛ղօթ.

Ա՛ստուածակալ ամ փառաւորեալ ի վերնայնոց կարգապետութեանց, և ի սոո-

րայնոցս երկրպագեալ բանդ ամ՝ ընդ
Հօր և սբ Հոգւոյն՝ ի սկզբան տպաւո-
րեցեր զձև և զօրինակ առ յապայ ե-
ղելոցս՝ Վանդի Թէպէտ՝ ինքնայօժար
խորամանկութ կամակոր եղեալ բան-
սարկուին և մեծապատիւ փառացն
խոստմամբ՝ ի բարեվայելուչ դրախ-
տէն ստորանկեալ մարդոյն. սակայն ի
սերանալ և ի բազմանալ մարդկան
ի վերոյ երկրի, հաձեցաւ մերոյս ազ-
գի բարեպաշտիլ առաքել սեղանօք և
պատարագօք։ Որպէս աբելի որ մա-
տուցանելոյ արդար կոչեցաւ. և նոյ
ելեալ ի տապանէն՝ մատոյց պատա-
րագ հոտոտել զքեզ տեառնդ ամ. և
աբրահամ մատուցանելով զձնմարիտ ող-
ջակէզ ի փորձութէ՝ օրինակեր զա-
նապական մահ քո ի խաչին, և արդ
ամ մեր բարերար՝ աղաչեմք և
մաղթանօք հայցեմք ի քէն, ընկալ
ողորմութ քո զնուէրս զայս ի ձեռաց
մերոց ի հաձութէ ամենազօր կամաց
քոց։ Ընկալ տէր ամ մեր մարդասէր

զնուէրս խոստման մերոյ, զոր ուխտե-
ցաք քեզ ՚ի նեղուածիդ մերում: յորում
աղաղակեցաք առ քեզ, և փրկեցեր
զմեզ: Ընկալ բարեխնամող ած ըզ-
պատարագս զայս՝ զոր համբարձեալ
մատուցանեմք քեզ անկարօտդ փըր-
կիչ. որոյ անհաս և անչափ է ողոր-
մութիւն քո գթածդ: Ընկալ անոխակալ
սէր՝ և հաւատարեա ընդ երջանկացեալ
սուրբ ընծայաբերութիւնս նախահարցն
սրբոց. զորս մերժեալ հեռացուցեր ՚ի
ստապատիր զոհիցն և ՚ի հեթանոսա-
կան ձեռնձերիցն. դիւամոլ կռապաշ-
տութեացն: Որ ՚ի ձեռն սէր և երանելի
մարգարէին քո Մովսիսի՝ հրամայեցեր
ժողովրդեան քումմ իսկ լի մատուցա-
նել քեզ պատարագ ՚ի հօտից, և յայ-
լոց սրբոց անասնոց ածել առ դուռն
խորանին վկայութեան, առ քահանայսն
ղևտացիս: Որոց դնելով զձեռն ՚ի վե-
րայ և հեղլով զարիւնն առ սէր սեղա-
նաւ քո տէր, յանցանքն քաւէին և
խնդրուածքն կատարէին: Այժ այնու

օրինակեր զստուեր հանդերձեալ ըզ-
Հշմարիտ փրկութեանս, որ շնորհե-
ցաւ մեզ գալստեամբ քո յաշխարհս:
Բանզի դու նոյն լինքն ամենազօրմ
բարերար ես՝ նախագուշակ հոգւոյդ
քո ի ձեռն մարգարէին ասացեր. ոչ
ընդունիմ ի զուարակաց քոց պարա-
րումն. այլ մատո՛ ինձ պատարագ օրհ-
նութեան. և կամաւորական մտօք անա-
րիւն մատուցանել զսիրտ բեկեալ և
ՀՀոգի խոնարհ, զորս ոչ արհա-
մարհես: Նմին այժմ մեք մեղուցեալքս
և անարժանքս՝ խոնարհ սրտիւք մե-
րովք անկանիմք առաջի քո գթութեդ
և աղերս մատուցանեմք զքաղցր
մարդասիրութենէ քո՝ որ առ սիրելիսն
քո հարան մեր Յոնարհեաց որ յընտ-
ծայս մեր և ընկալ զնա ի ձեռս մե-
րոց որպէս զողջակէզս խոյոց և զուա-
րակաց և որպէս զբիւրաւորս գառնոց
պարարտից: Հնարհեա՛ տէր զխընդ-
րուածս մեր, զի մի յամօթ եղիցուք
Հիշնամեաց մերոց. այլ ցնծալով ու-

րախասցուք ի փրկութեանն քումմէ։ Օ՜ի
եթէ զմեզ լերինս՝ զբլուրս և զդաշտ
կշռես յակնարկել քումմ, և զերկկին և
զերկիրս ի բռան ունիս, և նստիս ի
բարձրութեան բարձանց ի քրովբէական
յաթոռ, և անդունդք ոչ են քեզ ա-
ներևոյթք. և ամ չորքոտանիք և ամ
չնչաւորք չեն քեզ բաւական յողջա-
կիզս, զիարդ մեք իշխեմք մատուցա-
նել պատարագ։ Այլ դու տէր հաճե-
ցար մարմնանալ վասն մեր՝ և ուսու-
ցեր մեզ սրբով քովք Աբաքեղովք
հաւատս անբիծս, որ ի սուրբ երրոր-
դութենէ։ Որով արժանաւորեցեր զմեզ՝
եղբարս և որդիս անուանել, անարատ
մարմնով և արեամբդ քո՝ Յամին ամ-
նոյն ինքնիշ և այժմ սքանչելագործ
տէր՝ ընկալ ի ձեռաց մերոց զնուէր
զհնմանս այսորիկ, բարեխօսութեամբ
սրբուհւոյ Աստուածածնիդ և ամե-
նայաղթ նշանիս խաչի քո զօրութեբ,
որում հանապազ երկրպագանեմք,
Յաղաչանօք սրբոց առաքելոցն և

մարգարէից, և երանելի վկայիցն, որք
զարիւնս իւրեանց հեղին՝ փոխանակ
արեան քո սէր. պարգևեա՛ ձկայցո-
ւածս մատուցողաց սորա և շնորհեա՛
ձիոդութիւն մեղաց. ա՛ձեցո՛ ձհօտս և
զանդեայս և զամենայն ինչս և զատա-
ցուածս ծառայից քոց. քաղցրութիւ՛
հոսեա՛ զամպս յանդաստանս մեր՝ և
պարգևեա՛ զպտուղ շահականութեան.
և հալածեա՛ զաստանայական որոդայ-
թըս։ Օ՛ի աստ բարեպաշտութեամբ
կացեալ ի՛ հաձոյս քո, արժանի լի-
ցուք հանդիպել քեզ՝ յերևիլ փառայ
քոյ յահագին աւուրն, յորժամ դար-
ձեալ միւսանգամ դաս յերկինից հա-
տուցանել ըստ գործոյ. զի քեզ վա-
յելէ փառք իշխանութիւն և պատիւ.
այժմ և՛։

Օրհնեմ զՏէր պատուիրեալ հոգւոյ Աստուածոյ Աստուածոյ:
Գնացի ի սեղան հոգւոյ, և անուշով գինով.
և ասէր աղմուկ:
Յիշեցէք տէր զամ պատարագս քո՛:
Տացէ քեզ տէր ըստ սրտի քումմ՛:
Փոխ հօր և՝ Հ՚արկանն. Ձկն:

Ա՚ր յանկից ստեղծո՛ղ գո՛յից
և՝ յարարչակի՛ց հո՛ց բանդ առ-
տեալած. Թողութիւն շնորհեա նըկ՚ղե-
ցեալոց քոց ծառայից. յորժամ գա՛ս
դատել զոր անարատ ձե՛ռօք ստեղ-
ծե՛ր: Ա՚ր ի հօրէ ածա՛ծ և
մարմնացա՛ր ի՛ սուրբ կուսէն՝ Թո-
ղու: Ա՚ր ի խաչին տանջե՛ցար.
զմահու լուծե՛ր զի՛ շխանդութիւն.
Թողու: Ա՚ր պըսակիչդ ես քոց սը՛ր-
դոց և անվախձան բարեաց բաշխող.
Թողու՛:

Ն՚ ասէ կաղնեա:

Պահանամք զքէն տէր ամենա-

կալ արարիչ ամ արարածոց. որ լը-
ցեր և զարդարեցեր զամ երկիր պըտ-
ղալից և վայելուչ պարարտութ, և ե-
տուր զնա ի պետս ուրախուե որդւոց
մարդկան. զի փառաւորեսցի հանապազ
ամենասուրբ անուն քո՝ ի քո ստեղ-
ծեալ ծառայիսս, որք վայելեմք միշտ
յամենառատ բարութե քումմ։ Նա արդ՝
բարերար և բազմագութ տէր՝ քեզ
խոնարհեցուցանեմք զծունը սրտից մե-
րոց, և հայցեմք ի բարերարութենէ
քումմէ, առաքեա ի ժամուս յայսմիկ
զնորհս ամենազօր հոգւոյդ սրբոյ
ի վերայ սեղանոյս այսորիկ, և օրհ-
նեա ողորմութե քով զառաջիկայ հացս
զայս և զգինիս, զոր ի քո առատ բա-
րութէդ ժառուցանեմք առաջի քո ան-
կարօտդ ամէն, ի յիշատակ հոգւոյն
հաւատով ի քեզ ննջեցելոց։ Նա շը-
նորհեա ամենեցուն որք հաղորդին ի
սմանէ՝ զփրկուն, և զառողջութե կենաց,
և զթողութիւն յանցանաց։ Նա զհոգիս
ննջեցելոց մերոց յիշեա տէր՝ և դա-

սաւորեա՛ ընդ սուրբս քո յերկինսաւոր
առագաստին յանսպառ ուրախութեան.
և պարգեւեա՛ զվարձս բարեաց՝ մա-
տուցողաց պատարագիս: Նո՛ւ վասն
առատ մարդասիրութե՛ քո տէր՝ ջնջեա՛
զձեռագիրս յանցանաց մեր ժողովր-
դեանս, բարեխօսութե՛ սուրբ ծածկ-
նին և մեր արբոյ քոյ. և արժանի՛ ա-
րա զմեզ գտանել ողորմութե՛ յաւուր
հատուցման մեր գործոց: Ո՛ի դու ես
կեանք անվախճան, և երանութե՛ մեր
արդարոց: Նո՛ւ քեզ ամենասուրբ Հոր
բորդութե՛ և միոյ տէրութե՛ վայել է
փառք՝ հի՛ւ:

Խոստոյն հանգու՛ն: Վերջ որդի՛ն:
Խայտ հե ու յե՛ն:

Կանոն՝ Հաւ օրհնել քի։

Սաղմոս։

Ով՝ եք աղաւնւոյ արծաթապատ, և թիկնամէջ նորա ի գոյն ոսկւոյ։ Ի գումարել երկնաւորին զթագաւորս ի վերայ նորա, ձիւնասցին ի սաղմոն։ Լեառն աստուծոյ՝ լեառն պարարտ լեառն մածեալ՝ լեառն պարարտ. և զի՞նչ կարծէք լերինք հպարտացեալք։ Լեառն՝ ընդ որ հաճեցաւ աստ բնակիլ ի նմա. քանզի և տէր իսկ բնակեսցի ի նմա յաւար։ Կառք այ բիւրապատիկք՝ հազարք ուղղիչք. և տէր ի նոսա՝ ի սինէ սրբութեան իւրոյ։ Նայ ի բարձունս՝ և գերեաց զգերուսն. եաւ աւար բաշխեաց պարգևս՝ և եւս որդւոց մարդկան. քանզի Թերահաւատից ևս բնակեալ եղիցին ի նմա։ Տէր աստ օրհնեալ՝ օրհնեալ տէր յօրհանապազ,

առաջնորդեսցէ մեզ ամ փրկիչ մեր։
Ոչ մեր՝ ամ կենարար, և ի տեառն
նէ են ելք մահու։ Այլ սակայն՝ ամ
փշրեսցէ զգլուխս թշնամեաց մերոց.
և գհերն կարձնուվին, որք գնան յա-
նօրէնութե իւրեանց։ Այսաց տէր ի
խորոց անդնդոց դարձուցից, և ի մի-
ջոյ ժանեաց՝ զայն ի դուրս կորզեցից։
Որպէս թացցի ոտն քո յարեան, և լե-
զուք շանց քոց յարենէ թշնամեաց քոց,
Երևեցան գնացք քո ամ, գնացք այ
թագաւորին մերոյ սրբոյ։ Կանխեցին
իշխանք հանել զօրհնութի, ի մէջ կու-
սանաց և դաւչաց։ Յեկեղեցիս օրհ-
նեցէ՛ք զաստուած, և զտէր յաղբե-
րայն իսրայէլի։ Անդ բենիամին ի
տղայութեան զարմանալի, իշխանք
յուդայ առաջնորդք նորա՝ իշխանք
զաբուղօնի, և իշխանք նեփթաղիմայ։
Հրամայեա աստուած զօրութեամբ
քով. զորացո զայս զոր հաստատեցեր
ի մեզ ի տաճարէ քումմէ յերու-
սաղէմ, քեզ մատուսցեն թագաւորք

զպատարագս։ Աստեւ ի գաղան ե-
ղեգան, ի ժողովս զուարակաց՝ և ի
դասս երնջոց։ Աստեցին այնոքիկ՝
ոչ ըմբռեալ են արծաթով. ցրուեա
զհեթանոսս՝ ոչ կամին ընդ պատե-
րազմ։ Ակեսցեն հրեշտակք յեգիպ-
տոսէ. հնդիկք յառաջագոյն ձեռ ըն-
տուէ լերինն առ ած։ Ազգաւորութիք
երկրի օրհնեցէք զՅն, և սալմոս ա-
սացէք տեառն։ Ա՛նասպարկ արա-
րիչք այնմիկ, որ հատի լերկինս երկ-
նից ընդ արևելս։ Ա՛ստ տայցէ ձայն
իւր՝ ի ձայն զօրուէ. և տուք զփառս
ոյ։ Ի վերայ Իսրայէլի մեծ վայել
չուէ նորա. և զօրութիւն նորա մինչև
յամպս երկնից։ Սքանչելի է ած ի
վերայ սրբոց իւրոց, ած Իսրայէլի։
Ա՛ստ տայցէ զօրուէ հաստատուէ. ժո-
ղովրդեան իւրոյ, օրհնեալ է ած։

Ա՛պա՝ Ա՛ղօթ։

Օրհնեալ ես տէր ած մեր՝ որ ի
ձեռն օրինացն Հրամայեցեր մատու-

ցանել քեզ ամօւնեդ՝ հաւս աղաւնիս և տատրակս. որ էր օրինակ ձշմարտութեան։ Ոչ այժմ մեք հաւատացեալքըս, և ՚ի ձեռն հոգւոյդ սրբոյ և պատուական արեամբդ Ս՚իածնի քո ազատեալքս մատուցանեմք զհաւս զայսքեզ ՚ի հաձութիւն։ Ընկալ և օրհնեա զսա և յաւդիչ պարգեւեա. և արա արժանի օրհնել և փառս մատուցանել քեզ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Կանոն Ձ՚ըհօր Օրհնէլոյ։

Լռեսա փափաքանք ակնկն և պաշտօնեայքն և երկայ ՚ի պղծել ըհօրն, և ասյ հանել փառաւորեալ պոյլ ջուր և ապա պոյլ մայհանէ և պնէ ասելՙ ասպհու

Զայն ան ՚ի վերայ ջուրդ, և ամբ վառաց որոտաց. և տեր լինքն ՚ի վերայ ջուրդ բազմաց։ Ս՚ատուցէք տեառն՝ որ-

որդիք այլ մատուցէք ընդ զորդիս խոյոց։ Մատուցէք ընդ զփառս և զպատիւ. մատուցէք ընդ զփառս անուան նորա. և երկիրպագէք ընդ ի սրահ սրբութեան նորա։ Ձայն ընդ ի վր ջուրց, և ընդ փառաց որոտայ. և տէր ընդ ի վր ջուրց բազմաց։ Ձայն ընդ զօրութեամբ, Ձայն ընդ ի ճոխ. մեծ վայելչութեամբ։ Ձայն ընդ փշրէ զմայրս, և մանրէ տէր զմայրսն լիբանանու։ Մանրեսցէ զնոսա որպէս զմատաղատունկն լիբանանու. որ սիրելինէ որպէս զորդիս միեղջերուի։ Ձայն ընդ հատանէ զբոց ի հրոյ. ձայն ընդ շարժէ զանապատն, և խռովեսցուցանէ զանապատն ի կադէս։ Ձայն ընդ հաստատէ զեղջերուս, և յայտնի առնէ զանտառս։ Ի տաճարի նորա ամենեքեան ասասցեն զփառս նորա։ Տէր ղջրհեղեղս նստուցանէ և յաճուցանէ. թագաւորեսցէ տէր յաւիտեան։ Տէր զօրութեան ժողովրդեան իւրոյ տայէ. և օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղութիւն։

Աչխարհէ ելեալ հոգոյն և ասէ։
Տ. պրակիս. ՀԿ։

Աղբի՛ւր կենաց բաշխօղ հնարհաց հո՜
գի՛ դ իջեալ ՚ի բարձանց՝. զանապա՜
կան պարգևըս քո՜ բաժանեցեր յա՜
ռաքեալսն։ Ո՞ր ՚ի վերայ ջուրցն
գոլ՞ով ստեղծանէիր զարարածս. ի՜
ջեալ ՚ի՝ ջուրս աւազանի՞ն ծնանի՞ս
որդիս ա՜յլ։ Ո՞ր ՚զարդարեալ նորոգես
միշտ ը՛զ նո՜ր քո զեկեղեցի. պէսպէս
հնարհաց քոց պարգևո՜ք փայլի՜ն մանա՜
կունըք սորա՜։

Ա՜նո՜ պ՜ջո՜ւնեակնոյն ՚ի ջ՜ենջն՜, ա՜ ասէ։
Ա՛լէլո՜ւիա ա՛լէլո՜ւիա։

Զայն ան ՚ի վե՛ր ջուրց, և ա՜ծ փառաց
որոտաց, և ա՜ր ի՜ն՜ք ՚ի վե՛ր ջուրց՝։

Ը՜նդ՜էրցո՜ւած ՚է չորրորդ կա՜ղ՜։

Ա՜ւ ասեն ա՛րք քաղաքին ցեղիսէ. ա՜
հաւասիկ բնակուի՛ր քաղաքիս քա՜
րի՛ է, որպէս և տէրդ իսկ տեսանի՛.
և ջուրքս չար, և երկիրս անզաւակ։

Ն՝ ասէ եղիսէէ. առէ՛ք առիս կուժ
ամ նոր, և դիք այդր. և բերին առ-
նա։ Ն՝ եւ եղիսէէ յականս ջուրցն,
և էարկ անդ աղ և ասէ, այսպէս ասէ
տեր՝ քժշկեմ զջուրս զայսոսիկ. և մի
ևս լիցի այդ՝ի մահ և յանղաւակու-
թիւն։ Ն՝ քժշկեցան ջուրքն մինչև
յայսօր ըստ բանին եղիսէէի զոր խօ-
սեցաւ։

(Պօղոսի առաքելոյն այբբայէի՛ ընդհանր
ընդդրոյժ)

Ա՛Յ կամիմ եթէ տգիտք իցէք ի զ
բարբ, զի հարքն մեր ամենեքեան
ընդ ամպովն էին. և ամենեքին ընդ
ծովն անցին. և ամենեքին՝ի մովսէս
մկրտեցան յամպն և՝ի ծովն. և ամե-
նեքեան զնոյն հոգևոր կերակուրն
կերին. և ամենեքեան զնոյն հոգևոր
ըմբեղին արբին։ Օ՝ի ըմպէին՝ի
հոգևոր վիմէն որ երթայր ղհետ նո-
ցա. և վէմն էր Քրիստոս։

Ա. ԵԼԵԼՈՒԻԱ ԱԼԵԼՈՒԻԱ։

Տեսին ամ ծագք երկրի զկերկուսն այ
մերոյ։

ԱՅՑ Ա՛ՌԱՔԵԱԼՔ ՅԵՐՈՒՍ ՈՐ ԼԻԱ Ա՛ՄՊ՛։

Յայնժամ գայ յն՛ի գալիլեէ՛ ի յոր-
դանան առ յովհաննէս՝ մկրտիլ՝ ի
նմանէ։ Եւ յովհաննէս արգելու զնա՝
և ասէ. ինձ պիտոյ է՛ ի քէն մկրտիլ։
և դու՝ առի՞ս գաս։ Պատասխանի ետ
յն՛ և ասէ ցնա. Թոյլ տուր այժմ,
զի այսպէս վայելէ մեզ լնուլ զամ ար-
դարութի՛ն. և ապա թոյլ ետ նմա։ Եւ
իբրև մկրտեցաւ յն՛ել վաղվաղակի
ի՛ ջրոյ անտի՛. և ահա բացան նմա
երկինք. և տեսս զհոգին այ՝ զի ի՛ջա-
նէր իբրև զաղաւնի և գայր ի՛ վերայ
նորա։ Եւ ահա ձայն յերկնից՝ որ ա-
սէր. դո՛ւ ես որդի իմ սիրելի, ընդ որ
հաճեցայ։

Ա՛ՄՆ ՔԱՂ՛Ի։ Ա՛ղաչեսցուք զբարե-
բարն ած, և խնդրեսցուք ի նմանէ.
զի մաքրեսցէ զՋուրս զայս յամ աղ-

տեղուէ, և ասացէ՝ ի սկսս ծառայից
իւրոց շնորհօք ողորմութե իւրոյ. ամե-
նակալ տէր ամէն մեր կեցուսցէ և՛՝

Տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛

Տէր ամէն մեր, որ արարիչդ ես ամ ա-
րարածոց՝ երևելեացդ և աներևու-
թեից. որ գոյացուցեր զծով և զցա-
մաք, և զոր ի նոսա վայելչութե. և
հայեցեալ տեսեր զամ արարածս քո, և
ահա բարի են յոյժ։ Որոց վերայ
ստեղծեալ ի քէն զմարդն իշխան
կարգեցեր։ Ոսկ ինքնայօժար կամօք
չարացեալ բանսարկուն՝ պատրեալ
զնա վրիպեցոյց ի փառացն. և սեր-
մանեաց ի նմա զիւր չարութե սերմն.
Ով որ խնամօք արարչական ողորմութե
քո զերծուցանել կամեցուլ ի նորին
դաւաճանութենն, եառուր զգրաւորական
օրէնս աղգի մարդկան ի դաստիա-
րակութե, Եւ զտալոյաբարոյ միտս նոցա
կզուշացուցանելով ի հեթանոսական
սովորութեց՝ գրեցեր նոցա զխոստութե

կերակրոյն։ Ասէ յերեսիւ միածնի քո՝ տեառն մերոյ յի՛ քէն, որ լուսաւորեաց զեկեղեցի իւր սուրբ՝ աւետարանական վարդապետութեամբն, ուսաք ՚ի նմանէ և հաւատացաք ոչ արտասքուստ մեռանել ՚ի մեզ պղծութեն լինչ յարարածոցս, զոր եռուր մեզ ՚ի վայելս մարմնական պիտոյից։ Ա՛ սան ո՛րոյ և մեք աշակերտեալք վարդապետուե սրբոյ աւետարանին՝ և քարոզուե սրբոց առաքելոցն, խնդրեմք ՚ի քէն և աղաչեմք, ՚ի վերակոչելս մեր՝ զերկրպագելի անուն ամենասուրբ երրորդութեդ՝ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, սրբեա ամենակարօղ զորութեամբդ զջրհոսս զայս՝ և զոր ՚ի սմա զջուրս. և մաքրեա յիմ կարծեալ պղծուէ՝ ՚ի մերմէ հիւանդութենէս. և զորացո զտկար միտս մեր՝ առնուլ զսա առանց խղճի ՚ի վայելս մարմնական պիտոյից մերոց։ Ա՛ ւ զոհութեամբ փառաւորել զքեզ հայր՝ որդւովդ միածնիւ՝ և հոգւովդ սրբով. այժմ և՛։

Աղաղակութիւն յաճենից։

Տէր մեր յիս քս՝ միածին որդի և բանդ
ած, որ զախտացեալ բնութեես մեր
խառնեալ ընդ անախտ աճուրդ՝ ի վերո
մեր սուրբ արարեր զանձն քո։ Աւս
տի և մեք սրբեալք ի Հոգմարտուեդ
քումմէ՝ գոհանամք զքեզն, և աղաչ
եմք զմիայն քարեբարդ և զմարդաս
եր։ խոնարհեաց առ մեզ որք ժո
ղովեալ եմք յանուն քո սուրբ։ և հեղ
կընորհս հոգւոյդ սրբոյ ի քուրս յայս՝
նշանաւ սուրբ խաչին։ և սրբեա զսա
յամ կարծելի և յանկարծելի աղ
տեղութենէ։ Արպես զի անխղճ սրտիւ
վայելեալ զսա ի պէտս մարմնական
պիտոյից մերոց, փառաւորեսցուք ըզ
քեզ ընդ հօր և սուրբ հոգւոյ։
Ամէն խաչիւս։ Պահպանիչ և։
Տայր Տէր որ չէր։

Ամէն. ղ Ադամ, ղ Աբէլ, ղ Աբրահամ,
ղ Հեղ, ղ Ասլ, ղ Յակ և զ Հնձան

Օրհնելոյ.

Ընդ-ու-ի ել-ու-ի:

Քեզ վայելէ օրհնուիլ ած ի սիօն. և
քեզ տայցեն աղօթք յերուսաղէմ:

Ընդ-ու-ի Յ-ու-ի:

Պատուեա զտէր ի քոց արդար
վաստակոց. և հոն նմա պըր-
տուղ ի քոց արդարութէ արմտեաց.
Օ ի լցցին շտեմարանք քո լիութէ
ցորենոյ. և գինեաւ հնձանք քո առա-
ւել ևս բղխեսցեն:

Ընդ-ու-ի ի Յ-ովհ-ու-ի մկ-ի:

Քաջալերեաց երկիր. խնդա և ու-
րախ լեր, ի մեծացոյց ինր զառ-
նել իւր ել քեզ. Քաջալերեաց երկ-
վայրի, ի դալարացան դաշտ անա-
պատի. ի ծառ ետ պտուղ իւր. որպ

և Թզենի եւս զզօրուէս իւրեանց։ Ուրդիք սիօնի, ցնծացէք և ուրախ լե-
ռուք ՚ի տէր ամ ձեր. զի եւս ձեզ տայ կերակուր արդարութեան, և տեղասցէ
ձեզ անձրեւ կանուխ և անագան իբրեւ զառաջինն. և լցցին կալք ցորենոյ. և
ղեղցին հնձանք գինւոյ և իւղոյ։ Նե-
հասուցից ձեզ փոխանակ ամացն՝ յորս
եկեր մարախն՝ և ջրեհակն՝ և թըր-
թուրն, զօր իմ մեծ զոր առաքեցեր
՚ի վէր ձեր։ Նե ուտելով կերիջիք՝
և յագեսջիք, և օրհնեսջիք զանուն տե-
ռն ձերոյ, որ արար ընդձեզ սքանչե-
լիս. և մի ևս ամաչեսցէ ժողովուրդ
իմ յաւիտեան։

Պողոս առաքելոյն ՚ի Կորնթոս ընդհոյն
է ընթերցուածոյ։

Ա՛յժ այն որ պարգևէ սերմն սերմանա-
հանող՝ և հաց ՚ի կերակուր, պար-
գևեսցէ և բազմացուսցէ զսերմանիս
ձեր, և աճեցուսցէ զարդիւնս արդա-
րութեան ձերոյ։ յամենի մեծացեալք ամ

առատութիւն՝ որ յօրինէն մեզ գո-
հուէ այ։ Ո՞վ ի պաշտօն հարկիս այ-
սորիկ՝ ոչ միայն առ՝ ի լնուլ զպակա-
սուէ սրբոցն է, այլ եւառատեալ քաղ-
մօք գոհութիւն այ։

Ա՛ռէ՛ ալէ՛։ Ի կարդալ իմում լը-
ւար ինձ ած ըստ արդարուե. ի նե-
ղութիւն ինձ անդորր արա՛։

ՍԷ Ա՛ՈՒՐԻՈՅ ՎՐԻ՝ ՈՐ ԸՍՈ ԱՊՐ՛։

ՏԵՐՆ ՄԵՐ ՅՈՒ ՎՐԱ։

Եւ ասէր, այսպէս է արքայու-
որպէս զի այր մի արկանիցէ սեր-
մանիս յերկրի. և ննջիցէ, և յառնիս-
ցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բոլ-
սանիցին և աճիցեն. և նա ոչ գիտէ
Թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ.
նախ զխոտն, և ապա զհասկն, և ապա
ցորեան ատոք ի հասկին։ Եւ յոր-
ժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի ա-
ռաքէ մանգաղ. զի հասեալ են հունձք։

ՓԱՌՔ ՀԵՊ ՊԵՐ ՅԾ ՆԲ։

Ե՞ Ես խոպա՞։ Աշաչեսցուք զմար-
դասերն յծ, զի օրհնեսցե զսերմանիս
և զարդիւնս ծառւոյից իւրոց. ամե՛։

Ե՞ ՈՒՆ ԿՈՉԸՆ։

Օրհնեալ ես տէր յծ ամենակալ, որ
վերածես զամպս ՚ի ծագաց երկրի, և
զփայլատակունս յանձրևս առնես. կո-
չես զջուրս ծովու, և հեղուս ՚ի վե-
րայ երեսաց երկրի։ Ընդրեմք ՚ի քէն
և ադաչեմք, աղերսեմք և երկիրպա-
գանեմք՝ խոստովանելով զմեղս մեր,
և հայցելով զառատ ողորմութիւն քո։
Նայ տէր զսահանս երկնից, և ա-
ռաքեա զամպս ցօղել մեզ զանձրևս
շահեկանս։ Գլեա ՚ի ծերս և ՚ի ման-
կունս, ՚ի տղայս և ՚ի սրընդեայս, ՚ի
՚ի խաշինս և յանասունս, և յամ կեն-
դանիս։ Օրհնեա տէր և զբերս երկ-
րի մերում, զարտոյ և զագուց, զծա-
ղոյ և զխոտոյ։ Օրհնեա տէր զսեր-
մանիս մեր հանդերձ սերմանողօքս։

զի առատ ես ի պարգևս քո. տաս
սերմն սերմանողաց, և հաց ի կերա-
կուր մարդկան։ Աղաչեմք զքեզ թա-
դաւոր ողորմեաց ամէն ամէն մեր, որ խը-
նամովք քո լնուս զդաշտս և զլերինս
պարարտութեաբ, հայեաց ի սերմանիս
մեր. որ կարօղ ես առանց սերման
հնարհել հասկս՝ և առանց կերակրոյ
լնուլ զքաղցեալս։ Տուր տէր զառատ
ողորմութիւն քո, և աձեցո զարդիւնս ծա-
ռայից քոց ի պիտոյս կարեաց կեն-
ցաղոյս. զի աչք ամենեցուն ի քեզ
յուսան, և դու տաս նոցա կերակուր
ի ժամու։ ()րհնեա տէր և զամպս ի
վերուստ, զի զցօղ քաղցրութեն ցօղես-
ցեն յանդաստանս մեր։ ()րհնեա տէր
և զարտորայս մեր, զի առանց ամ
պրեսուց սնուցանիցեն զպտուղս իւր-
ցանց։ ()րհնեա տէր զեզինս և ըզ-
մշակս նոցա, զի առատ ջուրբ ժողովեսց-
ցեն զարդիւնս վաստակոց իւրեանց։
()րհնեա տէր և զպսակ տարւոյ քաղց-
րութեբ քո, զի լիութեբ և խաղաղութեբ

կատարեսցի: Օրհնեա տէր և զշտեմարանս ցօրենոյ, և զհնձանս գինւոյ և իւղոյ. զի լցեալք յառատուէ բարեաց քոց՝ առաւել ևս բղխեսցեն ըստ քոյին անսուտ բանիդ, եթէ երկինք լուիցեն ցօրենոյ և գինւոյ և ձիթոյ. և նոքօք լցցեն ժողովուրդ իմ: Նա զմեզ զամենեսեան արժանի արա խաղաղութեամբ վայելել զպագեաս առատ ողորմութեանդ. և գոհանալով փառաւորել զՀայրն՝:

Ամէն խաչէա՛: Պահ՛: Հայր մեր՛:

Կանան՝ Ասէ օրհնէլոյ և օծելոյ, Տանին Ի սեղանին առաջելոյն ոտիցն, Ի բերանէ ձեռին ձեռին՝ և լուանան նոքա ջրով, և չնջեն սրբէ ի սպաւով. և առնեն առաջի ի ներ:

Ի՛ւր ամ աղօթից իմոց. և նայեա՛ տէր յաղօթս իմ:

Ջփոխան նմա ասա՛

Նա ասա լուանան գինեաւ, և առնեն առաջի:

Ի՛ւր ամ աղօթից իմոց յաղաչէ՛լ՛:

Ջփոխան նմա ասա՛:

Աղիտաւոր տրոմղէ։
Խնդրեացուք հաւատով միաբանու՛։
Ն- Նպաս ձ Տէր աղերմե՛։
Ողհնութիւն և փառք հօր և որ՛։
Նրեայ հրէից ազգին ի գերհնաւէն։
Ն- այլ ասէն աղօթս։
Ա՛լէ՛։ ալէ՛։ Տեսին ամ ծագք երկ-
րի զփրկուէ այ մերոյ։ եթէ. Ողհնե-
ցի՛ք զտէր յօրհնուէ նորը, զի սքան-
չելիս արար։

Ընդհանրական աղօթք։

Արանեալ ե այր՝ որ եգիտ զիմաս-
տուէ. և մահկանացու՝ որ ետես
զհանձար։ Ո՞վ լաւ ե զվաճառն զայն
գտանել. քան զգանձս ոսկւոյ և ար-
ծաթոյ։ Պատուականագոյն ե քան զա-
կանս պատուականս. և ո՛չ ինչ ե չար
որ հակառակ կայցէ նմա. յայտնի ե
ամենեցուն. որք մերձին առ նա. և
ամ ինչ՝ որ պատուական ե. չարժե
զնա։ Ո՞վ երկայն աւուրք՝ և ամք
կենաց՝ ի յաջմէ իւրմէ. և յահեկէ իւր-
մէ

մէ փառք և մեծութիւն. ՚ի քերանոյ նո-
րա բղխի արդարութիւն. զօրինս և զո-
ղորմութիւն ՚ի լեզուի իւրում կրէ. Ա՛ա-
նապարհ նորա, Ա՛նանապարհ բարեց.
և ամ շաւիղք նորա խաղաղութեամբ.
փայտ կենսոյ է ամենեցուն. որք պա-
տասպարին ՚ի նա և որք կենուն ՚ի նա՝
իբրև ՚ի տէր յոստոստութեամբ։

Ընդ ելոյս ՚ի Ա՛ւետեաց Մատթէոսէ։

Այսպէս ասէ տէր. երթայք՝ մա՛ք
ե՛ դրունս իմ. կազմեցա՛ք զճանա-
պարհս՝ յորդեցէ՛ք զշաւիղս. գործե-
ցէ՛ք ճանապարհ ժողովրդեան իմոյ.
և զքարինս ՚ի ճանապարհէ անտի ՚ի-
բաց ընկեցէք. առա՛ք նշան ՚ի հեթա-
նոսս։ Օ՞ի աւասիկ տէր լսելի արար
մինչև ՚ի ծագս երկրի. ասացէ՛ք դըս-
տեր սիօնի. ահաւասիկ փրկիչ քո հա-
սեալ գայ՝ և ունի զվարձս իւր ընդ
իւր. և գործ իւր առաջի երեսաց
իւրոց։ Այլ կոչեսցեն զնա ժողովուրդ
սուրբ՝ փրկեալ ՚ի տեառնէ. և դու

կոչեսցես խնդրեալ քաղաք՝ և ոչ լը-
քեալ։

Պետրոս առաքեալն ՚ի Կորնէլիոսէ Ա.
առջին ընդունէ զհաւատս։

Օ ի Ճառ խաչին, կորուսեալոցն յիմա-
րութիւն է. այլ փրկելոցս մեզ զօրութի-
ւն։ Օ ի գրեալ է. կորուսից զիմաս-
տութիւն իմաստնոց. և զխորհուրդս խոր-
հրդականաց արհամարհեցից։ Ուր
իմաստուն. ուր դպիր. ուր քննիչ աշ-
խարհիս այսորիկ. ոչ ապաքէն յիմա-
րեցոյց Ած զիմաստութիւն աշխարհիս այ-
սորիկ։ Վասնզի իմաստութեամբն Այ
ոչ ծանեաւ աշխարհ իմաստութիւն զԱծ.
հաճեցաւ Ած՝ յիմարութեամբ քարո-
զուածն՝ ապրեցուցանել զհաւատացեալս։
Իսկ որովհետև հրէայք ընշան հայ-
ցեն. և հեթանոսք զիմաստութիւն խընդ-
րեն։ Մեք քարոզեցաք զխաչեալն
քրիստոս. հրէից գայթակղութիւն.
և հեթանոսաց յիմարութիւն։ Նայց նո-
ցին իսկ կոչեցելոցն հրէից և հեթա-
նո-

նոսաց՝ զքրիստոս ՚ի զօրութեն՝ և ՚ի
իմաստուեն։
Ալէ՛ ալէ՛։ Ընծ մերժեցեր և աւե-
րեցեր զմեզ. բարկացար, և զթասցիս
՚ի մեզ։

Ալէլո-իա Ալէլո։

Սէյ Ա-ո՛ղնո Յ՚ԻՆ՚ որ լսա Յօհան։

Ալան խաչելուէ տեառն մերոյ
ՅԻ ՎՀ։

Յայնժամ ետ զնա ՚ի ձեռս նոցա, զի
՚ի խաչ ելանիցէ։ Նա նոքա ա-
ռեալ տանէին զնա. և բարձեալ եր
ինքնին զխաչափայտն. և ելանէր ՚ի
տեղին՝ որ անուանեալ էր գադաթն.
և կոչիւր եբրայեցերէն գողգոթա։
Ուր և ՚ի խաչ հան էին զնա. և ընդ
նմա երկուս ևս այլս ասոի և անտի,
և ՚ի միջի զյն։ Գրեաց և տախտակ
մի պիղատոս, և եդ ՚ի վերայ խաչին.
և եր գրեալ յն նազովրեցի, թագա-
ւոր հրէից։ Զայն տախտակ ընթեր-

ցան բազումք ի հրեից. զի մա եր
ի քաշաք անդր տեղին՝ ուր խաչե-
ցաւն էր. և էր գրեալ եբրայեցերէն,
դաղմատերէն, և յունարէն։ Ասեն ցպի-
ղատոս քահանայապետքն հրեից. մի
գրեր Թագաւոր հրեից. այլ Թէ նա
ասաց՝ Թագաւոր եմ հրեից։ Պատաս-
խանի ետ պիղատոս. զոր լինչ գրեցի՝
գրեցի։

Ղուկաս։

Ասէ բարերարելոյ տն այ ի վերայ
մեր՝ և լսելոյ ձայնի աղաչանաց մե-
ծոց. զոր աղաչեսցուք. Տէր ողորմեա։
Ասէ շնորհելոյ զմեծ և զաւետ ո-
ղորմութիւն իւր. զոր աղաչեսցուք.
Ասէ տալոյ մեզ զերկնային զխաղա-
ղութիւն՝ զոր արար խաչիւն իւրով. զ՚։
Ասէ պահելոյ զմեզ ընդ ստինն յաղ-
թող զօրութեամբն. զոր՚։
Ասէ առաքելոյ զշնորհս հոգւոյն
սրբոյ ի տպաւորութիւն խաչիս. զոր ա՚։
Ասէ յուսով ձշմարտութե պարել մեզ
սո-

սովաւ ի վերջնում աւուրն. զտեր ա՛:
Ալան օրհնութեաւ՝ ամենայայտնի լինել լոյ
սրբոյ խաչիս. զտեր աղա՛:
Ալան հոգւոցն՛: Նա և միաբան՛:
Օ՜ անձինս մեր՛: Աղօրմեսց՛՛:

Աղօթք:

Տէր ամ անսկիզբն՝ որ ես միշտ յէութե
և արարիչ բոլորից. էութե կատարել
ինքնութե. մեծ և հզօր զօրութե՝ ան-
քննին և անհաս. որ ոչ երկինք բա-
ւեն մեծութե քո, և ոչ երկիրս բովան-
դակե զանբաւ արարչական զօրութիդ.
քև ընուս զամ ծագս երկրի, և բո-
վանդակեալ պահես ի զօրութե անհաս
փառաց քոց: Ալ քանչելագործ զօրու-
թեամբ և առաջնորդական ինքնիշ-
խան հրամանաւ քո՝ ամ երկնաւորաց
և երկրաւորաց շնորհս բարեաց պար-
գևես՝ ըստ իւրաքանչիւր յօրինեալ
սահմանադրութեցն: Յորորդութե սուրբ՝
կատարեալ՝ ամենակալ զօրութե. որ
նստիս ի վերայ քերովբէից՝ փառա-

ւորեալ յանմարմնական զինուորուեց,
ի սրոլբէական դասուց, ի հրեշտա-
կական բանակաց և յիշխանական պե-
տուեց. որք երեքսրբեան փառատրու-
թեամբ՝ վայելչացեալ իսկապէս ա-
րարչական տէրունեդ. որով լի են եր-
կինք և երկիր փառօք քովք. Որ ի
սկզբան իսկ՝ բարեգթուեք քով և ձե-
ռամբ Ս՛նանդիդ ստեղծեր զմարդն
ի պատկեր քո բարերարուեդ, ի մէջ
հրաշագործուեն խորհրդոյ սահմանե-
լով զնա՝ Նոր՝ յանկասիրութեք
անհասիցն անգխտացեալ՝ խաբեցաւ ի
պատրողէն, յանցաւ որուեք պատուիրա-
նին. կործանեալ ի դառն ձաշակմա-
նէ փայտին գիտուեն՝ և փոխանակ ա՛ծա-
տեսակ պատուիրանին, զկեանս անի-
ծաբեր և զմահ ժառանգեցաք. Ս՛պա
գթացեալ հայրախնամ ողորմուեդ՝
առաքեցեր յանծին ծոցոյ քումմէ ըզ-
միածին որդիդ զտէր մեր Յիսուս
Քրիստոս զփրկիչ և զստեղծօղ և ըզ-
նորոգիչ հնացեալցն՝ վերստին ա՛ծայինն

կենսատուրծուեր։ Արդ պայծառացոյց
ինքեամբ տնօրինեալ զմեզ ամ՝ ըն-
ծայեալ զնոյն Հոգին Հնորհս՝ ի փառս Հայ-
րենի կամացդ, և խաչակցեալ զբնուեիս
մեր՝ ի հերքումն ամենայնի պատ-
րոյգի, պարգեւեալ մեզ զնոյն Աստ՝
Հնորհ ածապարգեւ. փայտ կենաց և
փայտ յուսոյ և գիտուեե. գաւազան զօ-
րուե և գէն ամրուե. հաւատք խա-
չակցուիե և եղք բարձրուե. փառք
առ քեզ տէր ած մեր։ Արդես յայն-
ժամ տարածմամբ ածային արարչա-
գործ բազկաց մերոց ի վերայ
սորա, ժողովեալ զյորուեալսն ի մի՝
ի հաճուե քեզ. խափանեալով ի մէնջ
զմահ և զապականուե՝ այսու ածային
հնշանաւն՝ զոր եռուր փրկուե երկիւ-
ղածաց քոց յերեսաց աղեղան։ Ա-
յոյս մեր ամենասուրբ Աստուածդ
երկրպագեալ բարեպաշտի, խոնհրդով
կենսաբեր խաչի. որ է նոյն ինքն
ածատեսուե հօր, և վկայուե ածային՝
աւետարանել ի փրկուե աշխարհի։

«Նշան զօրավիգն յամենայաղթ խա-
չին, որով կոխեցան խայթոց քո մահու
մեղայ. և կենդանաքուղխ արեամբ
ածախտով՝ որ հեղաւ ի վերայ սուրբ,
բժշկեցան ի մեղ առածք կամակոր
թշնամւոյն։ Ո՞ի դու ես ածբարե-
րար և խնամօղ հայրական գթութեա
քով՝ և տէր ի վերայ արարածոց քոց.
որ արարեր խաղաղութեա յերկինս և
յերկրի՝ պատուական խաչիւ և ա-
րեամբ միածնի քո։ Նոյն որոյ քեզ
հօր և միածնի որդւոյ քո և կենդա-
նարար և աղաւթիչ սուրբ հոգւոյդ վա-
յելէ փառք. այժմ և միշտ և յաւի՛։

Աղաղակ ամենեցուն. Ա՛յնէ եղիցի՛։

Ապ եաղ յետոյ ձեռնադրեալ քահանայն
ամենասուրբ հոգւոյդ՝ եակիս և արար-
չակից որդիդ միածին փրկիչ մեր յի-
քեա՝ օր սահման և բոն՝ առաքեցար
լոյս ի լուսոյ. կեանք ի կենաց. ած
փրկիչ աշխարհի. որ առեր զմարմին

մարդկային բնութես, և ետուր զանձն
քո փրկանս աշխարհիս Յինքնիշխանն կա-
մօք քո եկիր ի խաչ. և յաղթական
փառօք կոխեցեր զիշխանութի մահու.
հեղլով զարիւն քո ի վէր փայտ խաչին,
բարձեր զանիծիցն դատապարտութի. և
պղեստաւորեալ՝ ծածկեցին Աշխարհ և
անապական հաւատով զմերկութի Ադա-
շակաց նախահօրն ետուր մեզ նշան
յաղթութեե զխաչաձև ընտրեալ փայտ
խաչի քո տէր։ Որդ՝ որպէս յայնժամ
տարածմամբ արարչագործ ձեռաց քոց
ի վէր սորին նշխիս, և հեշմամբ արբեն
քո եղեր զմա զսահմանն՝ ծածկեցին իշ-
խանութիդ. և փառաւորութի մեծ՝ երկ-
նաւորաց և երկրաւորաց։ Որ տէր
և այժմ զծածկեան ձեռն քո ի վերայ
սորին՝ քեզ տէր ընծայեալ նշանիս,
և խոնարհել օրհնեա զսա տէրունա-
կան օրհնութիդ՝ որ ոչ անցանէ։
Հեղլով զնոյն խորհուրդ հնարհաց ի
վէր սորա. տալով մեզ զսա իբրև վե-
րըստին փրկանս, և պահապան ամ

վտանգաւոր ներգործեայ, և զկնի ամենայնի
զինուորութեամբ մերոյ, պարիսպ ամրութեան
զնոյն ամենայնի զօրավիգ նշան, զամա-
կաբաղ խորհուրդ փառաց քոց՝ զոր ա-
ւետաբար ընդունիս ի գովութեան և ի պա-
տիւ ամենասուրբ երրորդութեդ, քան-
զի սուաւ խոստովանին օրհնաբանել և կեն
սաբեր անուն քո՝ ըստ ամենայն տիեզերաց. Ա-
ի ձեռն սորին նշանի խաչիս՝ օրհնեսցեն
զքեզ ամենայն ծագք երկրի՝ քո թագաւոր
փառաց, որ երեր յաճախութեամբ երկրպա-
գութեան պատուական խաչի քո, որով
արարեր զփրկութիւն ի մէջ երկրի. Այ-
սմիսիթարեսցէ զմեզ՝ յոր յաւետացուցեր
զմեզ. Այ երկնից մեղ ձանապարհ և ճըշ-
մարիտ լուսոյ՝ ուղղելով զշաւիղս մեր ի
հաճոյս քեզ. Զաւետան զօրութեամբ ա-
ւետաբեր ի սիոնէն տիրել ի վերայ
թշնամեաց և ջաղխել զգլուխս հեթա-
նոսաւոր վիշապին. Այ ես աթոռ փա-
ռաց և գաւազան ուղղութեան արքայութե-
քո. որով ի կեանս վերածեր զմեզ
Տէր ամ փրկիչ մեր՝ դու արարեր զմե-

մեծուհիս զայս ամ հաւատացեալոց, տալ
մեզ զփառս մեծուհի՝ ածային խորհր-
դոյս այսորիկ, զի դու ես որ ամ եր-
կրի՝ որ փրկեալոց քոց առաջնորդես
նշանաւ խաչին քո, որով աւարեր
քեզ մեծուհիս անուն սքանչելիս Պատ-
մեացեն երկինք զարդարութիւն քո, և
երկիր՝ խոստովանութիւն զփառս քո. զի
յուցեր ամ ծագայ երկրի, և ժողո-
վեցարդեան քում զփրկութիւն և զփառս
քո: Օրհնեացեն զքեզ քո գոհութիւ
ամ ազինք, որ զօրացուցեր զամենօրհ-
նեալ ածընկալ նշանս հնարհօք երկիւղիս
կողոպտուի և զձշմարտուի՝ սորին յաղ-
թական զօրութ. որով ընկալաւ յաղթութի
մահու և փշրեցան խայթոց դժոխոց:
Օ՛նա եառուր երկիւղածաց քոց նշան,
և պարտուի դիւաց գնդիկն. զսակ պար-
ծանաց կաթուղիկէ եկեղեցւոյ, և ա-
մենի թշնամւոյն: Օ՛նա եղեր պար-
ծանս և յոյս հաւատացելոց. որով տո-
նեն զմեծ փրկուի իւրեանց կանխաւ,
մինչև յանկիւնս սորին քո օրհնեալ

նշանիս և կենսատու խաչիս։ Այ՝ կա-
մըք հօր հաձուեր և ելք բարձրուեր.
ըե առաջ ի հանդիպումն քեզ՝ սորին
նշանաւ խաչի, պայծառապես լուսով
Քո Ա.Ճ. որ նստիս յերկինս երկնից
ընդ արևելս, ՚ի փառս հայրենի լի-
նել մեզ առաջի քո, զուարթատեսակ ե-
րեսօք, որք ազատեցաք յունայնութենէ
ապականութե՝ յաղաւտութեն փրկաւեր
գալստեանն քո։ Կեցո՛ որ զժողովուր-
դըս քո, և օրհնեա՛ զժառանգն նշանաւ քո՝
յայսմ հետէ մինչև յաւիտեան։ Ո՛վ ի
դու եա՛ծ՝ որ արարեր զխաղաղութե
յերկինս և յերկրի՝ պատուական խա-
չիւ և արեամբ քո։ և քեզ վայելէ
փառք՝ իշխանութե և պատիւ. այժմ և՚։

Սուխասեանց տպագրէ

Ընդրեսցուք հաւատով միաբա՚։
Ա՚պա ա-ե-ա-լ-ի-պ-ո-ւ-ն՝ և հա՛մ Քա-ն-ա-յ-ի-ն՝
զո՚ր ձեռանն, հանգիպի ա-ք-ն-ե-ր-ս խաչին։
Ե-ա ա-ե Ա՚ղօթս պայս։
Տէր ա՛ծ մեր՝ դու պատուիրեցեր մեզ
մի

և ասացեր. Մի երկիրպագանէք եր-
կնի, և ամ զարդու նմ. և մի երկրի, և
մի որ ի մա. և մի առնէք զձեզ ծո
ձեռագործս: Նա ասդ՝ մեք ծառայ
քըս քո և հաւատացեալքս ի քեզ, ա
րարաք զխաչս զայս, ոչ զնիւթս սուրբ
պաշտելով և ոչ զծս ձեռագործս
անուանելով. այլ ասլնաք զսա նշան սը
խաչի քո, յորոյ վէր տարածեցեր զքա
զուկս քո՝ միածին որդի մեր յիս քո
Ուրեմն՝ ընկալ զսա ի ձեռաց մերոց
և օրհնեա և սրբեա զսա՝ լինել ար
ժանի և կոչիլ ծայինշան, և պատճառ
երկրպագուե համագոյ իշխանուե հօր
և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և
[illegible]
Ար տարածեցեր զաշխարհաստեղծ և
զանարատ քաղուկս քո ի վէր փրկա
ւէտ խաչին. և հեղեր զարիւն քո սբ
կեցուցանել զվտարանդեալն ի ծա
ւայուէ մահու: Դու նոյն ինքն ար
մեր Յս Վն՝ առաքեա զՀոգւոյս ա
մենազօր և բարձրացեալ բազկի քո

Տէր ամ զօրութեց Վա՛ր փրկիչ մեր՝
տա-
238
նուէրն անձանց մերոց՝ ի պատճառս
ամենայաղթ սո՛ր Խաչին՝ ի պահպա-
Երրորդութեդ, զի արասցե զզօրու-
խաչիս այսօրիկ՝ յանուն ամենասուրբ
գեաց սուրբ Հոգւոյդ, հեղգութ՛ի վէր
որ ի հնումն հատուր և անտաբաշխ պար-
զի ու՛ր զի առեալ զսրբալոյս մեռանս՝
Ա՛մպ Տէ՛ռնոգբէ սո՛ Աէռոնաան նախ
ղա՛ղ Խաչին. ապա գմոգփա՛ և ապա
ա՛ղ և ահեակ Մանա՛ն, և գԱռնանն
Ա՛- ի պէռնոգբէ՛ն, ասէ՛
Երկնեացք՝ օծցի և սրբեսցի Ա՛կն
Խաչիս՝ սրբով Աէռոնաաս և աւուրս
հնորհիւ յանուն հօր և որդւոյ և հո-
գոյն սրբոյ. ա՛մէն։
Ա՛յնպէս գայլ պէղնա՛ն օծանէ, յիշէ գա-
նուանն՝ և լուգ կոպէ Խաչին։
Ա՛- ասէ գԱղօքն գայս։

դիր զարարչական ձեռն քո՝ զոր
տարածեցեր ի վէր սորին նշանիս, և
օրհնեա զխաչս զայս ի պահպանուիս
ամ հաւատացելոցս ի քէ զայժմ և՛:
Ղազիէլ ասէ. Ղիր ահ զամենասուրբ
ձեռն քո ի վէր նշանի խաչիս. օրհնեա
և տուր յաղթական փրկեալ ժողովրդեան քումմ, պարծելոցս ի կենսաբեր
անուն քո. այժմ և՛: Ղազիէլ ասէ.
Զգեա ահ զկենսագործ և զքարձրացեալ աջ քո՝ զոր սփռեցեր ի վէր
սորին զօրացեալ նշանիս, և արարեր
զանքննին մեծութիւնս: (Օրհնեա զխաչս
զայս և տուր պահպան խոստովանողացս ամենայնի երկրորդութեան, և
հան ամբռնէ՝ շինուցանել զամ նեստ
մուխս, և ընդդիմամարտ թշնամւոյն. զի քո է զօրութիւն՝ տէրութիւն և
փառք յաւիտեանս. ամէն:
Ղազիէլ երկպատիկ հոգոյն և հոգ-
ւոյն երկպատիկ ածեցեալ և հաստ-
պեն ասէլով երկոյս:
Ասէ քո Վա՜ երկրպագանեմք, և

զԹաղուէն քո մեծացուցանեմք, և սբ
զյարուեդ քո փառաւորեմք, եկայք
հաւատացեալք քՆի ոյ մերոյ, վասն
զի եկն ի ձեռն խաչին իւրոյ ընդ-
հեաց պարգեւս աշխարհի. սուրբ ՏԸծ,
սուրբ և հզօր, սուրբ և անմահ՝ որ
խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:
Փառք սուրբ խաչիդ՝ ալէլուիա. Ամէն:

Օ՜ էնե՝ ⲧⲟⲩⲟⲩϩ Ⲙⲡⲥⲏⲟⲩⲥ:
Սուրբ խաչիւս:
Ընդ եղեռն և կամ չարհաւոյն ասէ
վաղջն գոյգ:

Տէր ՅԱ ողորմիչ եմ աղաղաձոց. դու
ես ՅԱ յերկինս ի վեր՝ և յերկիր ի
խոնարհ: Օ՜ քեզ խոստովանեմք, ըզ-
քեզ փառաւորեմք, քեզ երկիրպա-
գանեմք և աղաչեմք. Պարգեւեա ըզ-
ՀՈՐՆ հոգւոյդ սրբոյ. նշանիւ այսո-
րիկ, զոր կանգնեցաք յանուն քո: Տէր
զսա պահապան հոգւոյ մերոյ և մարմ-
նոյ: Ամենայն՝ որ հաւատասցէ ի խաչ
ելեալ որդիդ քո, և երկիր պագանիմ

ցե նշանիս այսորիկ, դու լուիցես և
ներեսցես և կեցուսցես զնոսա։ Պատ-
կառեսցի ՚ի սմանէ սատակիչն, որպէս
՚ի տեսլենէն եղեկիէլի. և ոչ յօժեալ
դրանցն՝ որ յեգիպտոս։ Եւ որք տես-
ցեն զսա ՚ի հեռաստանէ, և կինքես-
ցեն զանձինս իւրեանց նշանաւ խաչի
քո, օգնեսցես յամ նեղուիս նոցա. և
եթէ թշնամիք հասանիցեն ՚ի վերայ
ուրուք, և եթէ ոք նեղիցի յայսոց պըղ-
ծոց՝ և ասպաւնեսցի ՚ի սա, դու որ
օգնեսցես և փրկեսցես զնոսա։ Եւ որք
ունիցին ցաւս ՚ի պէս պէս ախտից՝ և
կացցեն յաղօթս առաջի նշանիս այ-
սորիկ, դու լուիցես և բժշկեսցես ըղ-
ցաւս նոցա։ Եւ յորժամ մահ ածիցես
՚ի վերայ մարդկան, գայցեն և աղա-
չեսցեն զքեզ առաջի նշանիս այսո-
րիկ, դու լուիցես՝ և ներեսցես և կե-
ցուսցես զնոսա։ Եւ եթէ շաբժեսցին
ամպք բարկութեաւ, կամ կարկտիւ. կամ
հողմն խորշակի, կամ եղ՚ինաճիւն սաս-
նամանեաց դառնութեաւ. կամ ժանկ,

կամ մնալոյ, կամ թրթռուր. և ամ
հրամանն ցասման. և գայցեն ի աղա-
չեսցեն զքեզ առաջի նշանի խաչիս
քո, դու լուիցես և քաւեսցես և անո-
ցեսցես զցասումն պատուհասի քո. Ան-
զկնաշնամահ և գիմ ախտս անասնոյ
բժշկեսցես. և յիմ պատահար շարժ-
ման հրոյ և ջրոյ, տացես մեզ զնշան
սուրբ խաչի քո՝ յաղթանակ և պա-
հապան. Յիշեսցես և զարարածոց սորա
և ողորմեսցիս նմա. Ա՛ի ցանարժա-
նուիս իմ հայելով՝ արգելցես զչնորհ
զօրութե սուրբ հոգւոյդ՝ ի նշանէս յայս-
մանէ. այլ բան մեծի ողորմութե քում՝
գիացիր ի ժողովուրդս քո, և կա-
տարեա զաղօթս աղաչանաց սոցա. և
արժանաւորեա զմեզ յիմ ժամ կա-
տուածել զհայր և զորդի և զսուրբ
հոգիդ այժմ և՛՛.

Աստղաղոյն ամենեցուն. Ընդ էրկիրպագեա՛՛.

Զոհաբանեմք և փառաւորեմք զքեզ
Քո փրկիչ մեր՝ որ զերկնաւոր շնորհ

և զողորմուճե պարգևեցեր հաւատաց-
ցեալ ժողովրդեան քումմ՝ այսու քա-
զօրացեալ նշանաւս. յոր ելեր և կենաս-
գործեցեր զաշխարհս, և եռուր զսա-
սուսեր հոգևորական՝ սպանօղ մեղաց,
և մահացուցիչ ընդդիմամարտին։ Ընդ
հաղորդակիցս արարեր զմեզ զօրուճե
սորին նշանիս ընորհիւ՝ օրհնել սուրբ
և կնքել որ ինչ մեր՝ յանուն քո. որով
պայծառացեալ նշանեցաւ առ մեզ լոյս
երեսաց քոց. զոր յիշեսցեն և դարձցին
առ քեզ սուրբ ամենայն ծագք երկրի։
Որ ընդ նմա ես քո փրկիչ մեր. յոյս և
ապաւէն՝ զօրուճե և օգնուճե ի վերայ
նեղուելոյ՝ որք գտեալ զմեզ յոյժ, սաս-
տիկք մահու էին պաշարեալք. Տէր
զօրուճեց ընդ մեզ ամէն. որ ի հովանի
թևոց ամենայն նշանիս քո յուսացեալ
զմեզ, ծագեցեր ի սիրտս մեր զգե-
տուլճե հոգևոր ընորհաց, և եռուր
զսա պսակ բարձրուճե եկեղեցւոյ քումմ
սրբոյ՝ և աղբիւր բարեաց, ի մնուս-
ցանել և աճեցուցանել զմանկունս

սրբուհիե քո։ Քանզի զանմահարարս
մարմինս և զարիւն քո՝ պատարագելովդ
՚ի վեր խաչին եառուր մեզ ՚ի կեանս, և
արարեր զխաղաղուհի երկինս և եր-
րի։ Ա. յժմ ևս՝ շնորհօք պատուական
խաչի քո, արժանաւորեա զմեզ յաւ իսե-
նական կենացդ ընդ սուրբս քո և ընտ
խաչակիր պարծանօք կիրքոյս զձանա-
պարհս եւրեանց ՚ի քեզ ՚ի քէն փրկիչդ
մեր. ընդ որում հօր՝ միանգամայն և
հոգւոյդ սրբոյ վայել փառք իշխանուի
և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս՝։

Ամէն մեղ ողորմեա՛։

Այս եղեալ պատճառ խաչին յերեղեցին, որ
որ Ներսիսեան կոչեցաւ։

Կանոն՝ զԱկաբեաւ Ակեղեցի և Պատկեր Օրհնելոյ և Օծելոյ

Աբեհոբեայ հոհոնն առնէն. Ի յերբոբե ժամուն գան ի վեր Ահեղեցուն, և առեն առաջոն՝ ի լիս։

Պրանեաւ են ամբիծք ի Ձանապարհի, և ոչ գնան յօրինս սեռուն, զիարդ կամ ասե՛։

Պ.պա եւեաւ ի բեն, ասեն։

Օրհնեցի՛ք զսեր յերկնից. օրհնեցի՛ք զնա ի բարձանց։ Օրհնեցի՛ք զնա ամ հրեշտակք նորա. օրհնեցի՛ք զնա ամ զօրուքք նորա։ Օրհնեցի՛ք զնա արեգակն և լուսին. օրհնեցի՛ք զնա ամ աստեղք և լոյսք։ Օրհնեցի՛ք զնա երկինք երկնից. և ջուրք որ ի վերոյ քան զերկինս, օրհնեցի՛ք զանուն տեառն։ Օ ինա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան։ Կացոյց զնո՛ յաւիտեանս յաւիտենից. սահման եդ՝ և

և ոչ անցանեն: ()րհնեցէք զնոր յերկ-
րէ՝ վիշապք և ամ խորք: Հուր և
կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մըր-
րիկ, որք առնէք զբան նորա: Լերինք՝
և ամ բարձունք՝ ծառք պտղաբերք՝
և ամ մայրք: Գազանք՝ և ամ անաս-
սունք. սողունք, և ամ թռչունք թե-
ւաւորք: Ծադաւորք երկրի և զօրք
իւրեանց. իշխանք և ամ դատաւորք
երկրի: Երիտասարդք և կուսանք,
ծերք և տղայք՝ օրհնեցէք զանուն
տեառն: Քանզի բարձրացաւ անուն նորա
միայն. խոստովանութիւն նմա յերկինս
և յերկրի: Բարձր առնէ տէր զեղ-
ջիւր ժողովրդեան իւրոյ. օրհնու-
թիւն նմա յամենայն սրբոց նորա.
յորդւոցն իսրայելի ժողովրդեան՝ որ մերձ
է առ տէր:

Ես պիտի՝ ասեմ ապաշխարութիւն

()րհնեցէք մանկունք զտէր. և օրհ-
նեցէք զանուն տեառն:

պիտի լինի ասում՝

Բարով Աստուած ի վերուստ խալալ։

Ընտ եպիսկոպոսին ուղղութիւն պայծառ

Տէր ամէն զօրութեց և արարիչ ամ աշ-
խարհածոց, որ արարեր զերկուս հրեղէն-
նայս և զդասս սերովբէից՝ քեզ փառս
դասանիչս, որք անդադար ձայնիւ
զերեքսրբեանն՝ սուրբ, սուրբ, սուրբ,
տէր զօրութեց. լի են երկինք և երկիր
փառօք քո ասելով՝ փառաբանեն զքեզ։
Այլ և արարեր զմարդն և եդեր զնա
ի դրախտին փափկութեան՝ ի լուսեղէն
փառսն. յորմէ խաբմամբ չարին՝ յար-
տաքս ընկեցաւ։ Այլ դու ամենո-
ղորմած՝ ոչ անտես արարեր. այլ՝
զթացեալ յազգս մարդկան, առեր
առ քեզ. և ընտրեցեր զհինգ երդն
զենովք՝ և յանմահութիւն փոխեցեր. և
զնոյ՝ ի ջրհեղեղէն տապանաւն ապ-
րեցուցեր։ Օ՜ աբրահամ սիրեցեր, և
ի զաւակէ նորին՝ զազգ մարդկան
օրհնել խոստացար. և ընդ մովսիսի
խօսեցար, և զդրաւորական օրէնսնմա

պարգևեցեր։ Նա այն մարգարէիւք
խօսեցար յաղագս մաքրկանն, և ծանուա-
ցեր զքեզ ՚ի նմա և արարիչ ՚ի պարա-
ծոց՝ երկնաւորեայ և երկրաւորեայ։
Նա առաքեցեր զծուցածին որդիդ քո՝
գալ և ծնանիլ ՚ի սրբոյ կուսէն մա-
րիամայ, որ եղև Աշմարիտ մարդ և
ՈՅ կատարեալ՝ անշփոթ միութեբ. և
քարոզեաց տիեզերաց, և ուսոյց մեզ՝
զքեզ հայր կարդալ։ Նա բարձրա-
ցեալ ՚ի վերոյ փայտ խաչին՝ եհեղ ՚ի
զարիւն իւր ՚ի վե րոյ գլխոյ նախնւոյն
մերոյ ադամայ, և փրկեաց զարարած
՚ի ծառայուէ մեղաց և մահու. եդաւ
՚ի գերեզմանի, յարեաւ յաւուր եր-
րորդի և համբարձաւ փառօք յերկինս
Նա առաքեաց զառաքեալսն ընդ ամ
տիեզերս քարոզել և աւետարանել
զքեզ՝ տէր և ՈՅ. և ՚ի նոցանէ ու-
սեալք եղեն անթիւ դասք սուրբ հայ-
րապետաց և մարտիրոսաց. Նոր կու-
սանաց և Ճգնաւորաց. որք վասն անո-
ւան քո տանջեցան և պսակեցան ՚ի

քէն տէր։ Եւ մեք մեղուցեալ ծա-
ռայքս քո՝ վասն միառայ և պատուոյ
քո արարաք այժմ զսիպ և զբրինակ
պատկերի՝ զսրբոց հրեշտակայ և հր-
րեշտակապետաց, և զսրբոց մարդկա-
յինս սեռի, որք քեզ աշխատասուրե-
ցան՝ և ընկալան ի քէն զհոգիդ սո-
Եւ արդ՝ ժողովեալք ի տաճար քո
սուրբ հայր երկնաւոր՝ աղաչեմք զք-
քեզ առաքեա զշնորհս հոգւոյդ սրբոյ
որպէս ի վերնատունն, և օրհնեա զզ-
պատկերս՝ զոր արարաք յանուն սրբոց
քոց։ Յիշեա տէր և զարարօղ սորա,
և պարգեւեա զնոսա և զբաժին յար-
քայութեանդ քումմէ։ Օրհնեա տէր և զք
առաջի կացեալ ժողովրդիս, և արժա-
նաւորեա փառս մատուցանել քեզ հօր
և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և

(Աղաղակեն ամենեքեան. Ա՛յ երկիր պագե՛)

Սուրբ ես տէր և ի սուրբս հանգու-
ցեալ՝ սրբեա զկենդանագիր պատկե-
րըս զայս սրբոց քոց վկայից, զոր այ-

ժըմ մեք սատյաք ՚ի յիշատակ նոցա,
և ՚ի պայծառուել սուրբ եկեղեցւոյ. և
՚ի պատիւ և յերկրպագուել ամենասրբ
Աստուածածնի։ Որու տէր՝ օրհնեա և
սրբեա զպատակերս զայս, և ընկալ զեր-
կրպագութիւնս մեր ՚ի պատիւ փառաց
քոյ։ Հնարհեա և վարձս բարիս՝ որք
վաստակեցին ՚ի սմա, և տուր նոցա
զբարի պարգեւաց քոյ գհատուցումն։
Պարգեւեա մեզ ամենեցուն զթողուել
մեղաց և զընդունելուել հոգւոյդ սրբոյ.
որպէս զի հաւատացեալքս՝ արժանա-
պէս ընծայել կարասցուք զփառս և
զպատիւ, և գոհութիւն և օրհնաբանութիւն
քեզ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ.
այժմ և միշտ և յաւիտ։

Ա՛ստ՝ Ողբերգ առն. շարականաց, ձեռ.

Օրըս ըստ պատկերի քումդ ըստեղ-
ծեր. նորոգելով քեզ տաճարաց՝ ցու-
ցեր զնորոգեալս ՚ի միջի ըզտա-
ճարս։ Ով՝ ՚ի մի՞նչ ըզտա-
կուն։ Ոյր հնարհեա՞ մեզ կենաց սը-

ւօշ ղկենդանադիր քո ծառայական
կե՛ցպի՝ թե թլով ը՛զբոլորից ը՛զվեր-
բերօ՞ս ա՛մ՛ղչ ՚ի վառըս սուրբ եր-
րորդո՛ւեճդ։ Ակցո զ՚ըրդի՛ ծառայի՛
քո զոր ՚ի հուսմայ գահիցըն վե՛ր բակա՛ա-
տուեցեր. ուր եդին ը՛կվէմըն հա-
ւատովմ՛ամ՛ոյ հիմա՛ս սուրբ
եկեղե՛ցւոյ։ Ալը ը՛զվերջինըս զայ
հրա՛շազո՛րդեցե՛ր. քև չսէ բնակուե՛
ընհիմանափայլե՛ցե՛ր. ըզպանծալի և
ը՛զփայլեալ ը՛զփառս տանս ա՛մ՛ն։
մ՛այս վե՛րջի՛նըս քան զառա՛ջի՛նն։

Աբկաւագն երգէ։

Ա՛մէն՝ Ա՛լէլուիա. ալէլուիա. ալէ՛։

Ի՛սկ եպիսկոպոսն՝ ո՛ր Աեռնասէն ուսանի
օծանել նոխ կճակս պատկերին և սպա-
ղայ պաշտաճեալ պեղէնս, ըստ այսմ երէից
սուրբ։

Օրհնեսցի՝ օծցի և սրբեսցի ձակատ
պատկերիս՝ այս նշանաւ սուրբ խաչիս
և՝ որ մեռանաւս, և լինիցի արագա-

հաս օգնական և փրկիչ ՚ի սր ապա-
ւինելոց. ձանապարհորդաց պահապան.
ալեկոծելոյ օգնական. հիւանդաց բը-
ժշկարան. մեղաւորաց քաւարան. և
անեղկիւղ պահեսցե զայնոսիկ՝ որք ՚ի
տաբակուսի կան. յանուն հօր և որ-
դւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից ամէն,

( )րհնեսցի՝ օծցի և սրբեսցի (այս ենէ)
պատկերիս՝ ՚ի ծայրին օրհնութ, և տացի
սա զօրութ բժշկել զհիւանդս. հալա-
ծել զդևս. բարեխօսել վասն մարդ-
կան. շինութ գոլ տանց. և առողջութ
հնարհել հոգւոց և մարմնոց. յանուն
հօր և որդւոյ և՛;

( )րհնեսցի՝ օծցի և սրբեսցի (այս ենէ)
պատկերիս՝ զօրութ ՚ի ր հոգւոյն, և ՚ի
Ն.Ջ սորա զաղգս մեր զօրայուսցէ.
զդեբեաս ազատեսցէ. զբանտարկեալ
հանցէ. զանհաւատան խորտակեսցէ, և
պահպանեսցէ զհաւատացեալս ամենա-
սուրբ երրորդութեն հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ. այժմ և՛:

Ա՝- ապա՝ կա՛ռնէ տապ-յանէն և հանէ՛ բերէ՛ն
ամէն կրպա՛ս զօծ-էլ պապհէրն։ և երթէն շա-
բահան՝ ըսա պապաշճէնիկոմանն։ Այնահա՛պ
և փարսն՝ կամ, Աբ խաչիւս։կամ, Աբ զնծ-
ած ինն։ և կամ, Աբ Ճգնաւորքն։ ըսա ա-
րդ և էնէ պապհէրնիկոբէաւ, ասելէ է։
Այնպէս և պօշէ ըսա պապաշճէն։

Ա՝- ապա՝ ՛ի՛այր մեր՛։

Կանոն՝ Ակհ և Ա՝աղման օրհնելոյ

Ա՝աղման չգովն և գինեաւ, և ասէն ասղնու։
Յ՛ներ հալուեսցէ զիս։ և ինձ ինչ ոչ
պակասեսցի։ Ի՝ վայրկ դալարուջ
անդ բնակեցոյց զիս։ և առ ջուրս հան-
գստեն սնոյց զիս։ Դարձոյց զանձն իմ
առիս։ և առաջնորդեց ինձ ՛ի ճանա-
պարհս արդարուե վ՛ն անուան իւրոյ։
Թէպէտ և ագնացից ես ՛ի մէջ ստուե-
րաց մահու, ոչ երկեայց ՛ի չարէ, զի
դու ես ընդ իս։ Յուպ քո և գաւազան՝
նո՛ք մխիթարեսցեն զիս։ Պատրաստ ա-
րարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդի-
ման նեղչաց իմոց։ ( )ծեր իւղով ըզ-

գլուխս իմ. բաժակ քո ոչ անսպակ ար-
բեցուցչ զիս։ Ողորմութիւն քո ետուր՝ զհետ իմ
եկեսցէ զամ աւուրս կենաց իմոց, զնա-
կիլ հնձ ի տան Տեն ընդ երկայն աւուրս։

Ն՚ փոխանայն ասէ պաղլոս ցայս

Որհնեալ ես դու Տէր, որ եառուր
մեզ զնուէրս զայս ընդ հաճոյից քոց առ-
ի քէն տուելոյ մատուրուես առնել
անօթի սրբուե քումն։ Արդ՝ ընկալ զսա
ի ձեռաց մերոց և սրբեա սրբութիւ
քով, զի արժանի լիցի ընդունել ի սպա-
սաւորութի եկեղեցւոյ քումմ սրբոյ, որով
և բերկրեսցին մատուցօղք սորա, ակն
ունելով բարեաց հատուցման ի քէն։
Եւ զմեզ արժանի արա սրբուե կեալ
ի քահանայութես կարգի պաշտել ըզ-
քեզ ի սուրբ եկեղեցւոջ քումմ զամ
աւուրս կենաց մերոց, և ընդունիլ
զխոստացեալ բարիսն որ ի քէն։
Եւ քեզ ընդ հօր և սուրբ հոգւոյդ
վայել է փառք իշխա՛։
Ամէն մեր որ կերկինս։

Կանոն Եկեղեցւոյ Օգեստ Օրհնելոյ. ի, Շապիկ, Բուրան, Վակաս, Շուրջառ, Գոգնոց, և զայլս։

Ընդառաջ ուրհատացն ի վերոյ բովիչին, և առնէ ասէն ասելով։

Յիշեա տէր զդաւիթ՝ և զիմն ամենայն։

Այս է՝ որ խոստ՝ Աշակերտացուք զմարդասէրն Աստ, զի ընկալցի զսպասս զայս ի հաճոյ բարերար կամաց իւրոց՝ ի պայծառուէ տան իւրոյ՝ ի գովեստ փառաց անուան իւրոյ. և կեցուսցէ զարարածս իւր. ամենայն։

Այս չափաւոյն ասէ Ղեւտն։

Տէր Աստ հզօր՝ բարձրեալ և ահաւոր, որ զգեցուցեր զեկեղեցի քո լուսով փառաց քոց, և եղեր մեզ զգեստ անապականութեան։ Ընկալ ի մենջ զըզ-

վնիւթ խորանին վկայուե, և իբրև ըղ-
հանդերձս մանկանցն երբայեցւոց ՚ի
պատիւ քեզ տարածելոցս (Օրհնեա և
սրբեա զսա. որպէս ընկալար և օրհ-
նեցեր զկտաւան յովսեփայ, զոր մա-
տոյց ՚ի պատանս ածային մարմնոյդ.
զի և սա արժանի լիցի եկեղեցւոյ
քումմ սրբոյ: Եւ որպէս զի ցնծասցեն
մատուցօղք սորա, տուր նոցա ար փո-
խարէն. հատո նոցա աստ և ՚ի հան-
դերձեալ երկրիդ զպղծմանէ քո մեծ
և զառատ: Եւ քեզ ընդ հօր և հո-
գւոյդ սրբոյ վայելէ՛:

Ժողովուրդ՝ Ա՛յդ մեր ոչ չէ՛՛:

Կանոն՝ Նոր Գ՛իրք Օրհնելոյ:

Տանէր ՚ի հեղեցիկն, և սուրհանդակն առնելով
՚ի վերայ բազկացն, և ասէն ընդ-
Նայեցարուք ժողովուրդք յօրէ՛:
Ա՛նձն ցոյն՝ որ ասէ, Դորդան եղ որ՛՛:
Վ՛ասպան:
Խնդրեսցուք հաւատով միաբա՛:

Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛:

Եւ ընդհանուր ասէ պաղծեալս:

(Ե)րկնաւոր հայր տէր ամենակալ մեր, որ ետուր մեզ զպատուիրանս քո՛ի լուսաւորութիւն անձանց մերոց՝ լինիլ և այժմ զնորաստիպ գիրս սիրոյ ի ձեռաց մերոց ի տաճար սուրբ քում (Ե)րկնեա և սրբեա զսայ-զի որք ընթերցցին, և որք լուիցեն, բանայցեն սիրտք նոցա առնել զհրամանս քո գրեալ ի սիրտս իւրեանց, լինել քեզ ժողովուրդ սեպհական: Պայծառացո՛ տէր և զհոգի մատուցողի սորին. և եթէ յանցեալ լինիցէ ինչ փոքրու կամ մեծի, արա թողութիւն բարեխօսութեամբ սուրբ ամենայնին և մեզ սրբոց: Ո՛ի դու ես տէր ամենայն մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն:

Կանոն՝ Օրհնութիւն Աշակերտութեան

Յորժամ ոք ուսեալ պարտեսցի ինչ՝ և կա-
մի ելանել յուսումնական, այնմ՝ ի վար-
պետէն եղիցի, պարտի այսու հմանաս-

օրհնիլ։

Այս՝ պարտ է օրհնող տեսանացն՝ նոյնու-
յոնել պաշտելիքն սուրբ է եւ քան
պատշաճին խորհել զնա հոգեւորականաց
ոտ և ուսմանէ. այնինքն՝ իբրեւ պղծու-
պոլնոցեալ պատուիրեցնոյ, հետ հաւ
յետ այնորելիչ յոմ էր ի տալոյ սովորութեան,
այնինքն՝ յերբեմնէ յերբեմնէ յոյնելոյ, ի
ուսոյ սուելոյ, ի գողոլենէն, յասելէ սու-
նելոյ և պահս պուլոյ, զնուկնոն և պշտոն-
ի պեղէ պատուհանին և պլխոնոյն սբ-
պուբ վաճառելոյ, և ի բանէ և հանուսոյ
ուսոգագոյն ուսուցչոյն ելանելոյ, և յա-
ղնուելոյ պատրաստ պաշտօնէին, որովհ
հորուսանէ տեսէ զկոգի նոր ուսո բաշ-
յուելոյ անյագ ագահու զանշահ լինէր,
պէտ է զգուշանալ զնա յայնպանէ, և

Տարփածու, սրտատվածուհի, երանելի՛ հոգի, երկնաշէն յոյս, աղբիւրաց ամենեցուն, և ըսկիզբն վերակերպեալ երկոյ և ծնողացն։

Շարական։

Աշակերտը քեզ՝ և առ ո՞ր տիեզերս երթաս աւետաբեր լինել. բայց խօսեցիր առ տէր վասն մեր։ Որք առիք զպատուիրս քարոզել աներկիւղ զբանն կենաց ա՛շխարհի. բա՛ւ։ Որք արժանի՛ եղէք տեսանել մարմնով զնիւթն այլ յայտնապէս. բարե՛։

Որ սկզբանէ էք արարչին արարածոց քեզ սուրբ աւետաբե՛ր. բարե՛։ Որ քարոզէ էք ընդհանուր տիեզերաց քեզ սուրբ առաքեա՛լ. բարե՛։ Որ պըսակիդ էք ամ եկեղեցեաց քեզ ո՛ր առաքեա՛լ. բարե՛։

Ա՛րմաւ լեր ամենայն տաճար նո՛ր խախտե՛լի. ըզքեզ մեծացուցանե՛ք։ Յի՛շ ա՛ցար անարա՛տաբա՛ր. և՝ զայծ վայելչա՛պէս ծընա՛ր. ո՛րպէս լե՛ր։ Ո՛րպէս մարգարէն ա՛ր և տաճար քո

սքանչելի արդարութիւք և՝ դուռն երկնայինն. ո՛րբա՛ս լեր՛։

Խէ Աստ՛ւած քո եղիցի մեզ ապաւէ՛ն բոլոր-
նի՛շ փայլմամբն իւրով. խորտակեաց
ըզձշնամի՛ն և ելո՛յծ ըզդատակնի՛ք
անուանեա՛լ փայտի՛ն կենաց՝ ի փրկու-
տիեզերաց։ Ա՛ե՛ր առնելոյն ա՛ն եր-
կինք և երկի՛ր ուրախանայ՝ ընդ
յայտնիլ սրբոյն խաչին սեռականաձև՝
քառաթևին, որ զաշխարհըս լուսաւո-
րե՛ց արեգականակերպ-ճառագայթի՛ւք
փառ՛ փո՛ք և՛։ Աղաչեմ և դնդ և՛։

Ո՛ր երկոքո՛ւմբք սուրբ լուսաւորչո՛ք
տանըն Թո՛րգո՛մայ, հաստատեցեր
զեկեղեցի՛ս հայա՛տառնեայց զոյս ի-
մաստի՛ն՝ ի մեզ ծագե լով. մաղթանօք
սոցա քրիստո՛ս խընայեա՛՝ ի՛ մեզ։

Աղէլուխ ալէլուիա։

Օ՛ վաստակս ձեռաց քոց կերիցես ե-
րանի՛ ե քեզ. և բարի եղիցի։
(Երէք) Երանի՛ ամենեցուն որ՛ք ե՛րկնչին
՝ի տեառնէ և գնան՝ ի ճանապարհս նո՛ր։

Աղերսագոծ յԱստուծոյ։

Որդեակ՝ մի տար քուն աչաց քոց և մի նիրհումն արտեւանանց քոյ։ Ի ապրեսցիս իբրև զայծեամն ի հաղթէ. և իբրև զհաւ յորդայթից։ Արթո՛ր մրջինն, և նախանձեա՛ց ընդ ճանապարհս նորա. լեր լսաստուածպաշն և քան զնա։ Ո՛չ նորա ոչ գոյ երկրագործուն. և ոչ հարկադիր. և ոչ այն՝ որ տագնապիցէ. և ոչ ընդ տերամբք է։ Այլ պատրաստէ յամառայնոյ զկերակուր. և բաղում համբարս դնէ ի հունձս։ Ա՛յնչափ յո՞րդ անկեալ կաս ով վատկամ ե՞րբ ի քնոյ զարթիցես։ Փոքր մի ննջիցես. փոքր մի նստիցիս. փոքր մի նիրհիցե՛ս. փոքր մի հանգուցանիցես զձեռն քո ի վերայ լանջաց քոց։ Ապա այնուհետև հպատնիցի քեզ իբրեւ զչար ճանապարհորդ աղքատութի. և կարօտութի քո իբրև զժիր սուրհանդակ։ Ապա եթէ անդանդաղ լինիցիս. եկեսցէ իբրև զաղբիւր ամառն քո. և կարօտութի իբրև զայր մի չար ինքնահալած լինիցի։

Աղաչեցուցանեմ զՔեզ Տէր Յովհաննէս Մկրտչէ:
Ահա աւուրք գան ասէ տէր՝ և հասցեն կալք կիթոց. և խոյծեսցի խաղող՝ ի հալաւուննս, և բղխեսցեն լերինք զքաղցրութիւն. և ամ բլուրք անտառախիք եղիցին: Եւ դարձուցից զգերութիւն ժողովրդեան իմոյ Իսրայէլի. և շինեսցեն զքաղաքս ապականեալս, և բնակեսցին. և տնկեսցեն այգիս, և արբցեն զգինի նոցա. արասցեն պարտեզս, և կերիցեն զպտուղ նոցա: Եւ տնկեցից զնոսա յերկրի իւրեանց, և մի՛ ևս մերժեսցին յերկրէ իւրեանց՝ զոր ետուս ես նոցա՝ ասէ տէր ձեզ ամենակալ:

Պէղոսէ Աստուածէն ի Կոստանդնուպոլսոյ
ընդհանր է ընդերցուածս:

Այլ ով հոգի՛ որ յամի հուշակ հարկանէ զմէնջ ի քրիստոս Յեսուս. և ըզհոտ գիտութեան իւրոյ յայտնի առնէ մեօք յամ տեղիս: Օ՜ի հոտ անոյշ եմք քրիստոսի առ Աստուած. ի մէջ փրկելոցն և ի մէջ կո-

կարուսելոյն։ Ամանց հատ՝ի մահուանէ
՝ի մահ. և ամանց հատ՝ի կենդանութէ ՝ի
կենաս. և առ այս բաւական լիցի ... Ար-
պետ և բաժինք շնորհաց են՝ այլ հո-
գի նոյնն, Այլեկ բաժինք պաշտամանց
են, այլ միր նոյնն, Այլեկ բաժինք յաջո-
ղութեանց են, այլ միւ նոյնն, որ յաջողէ զամ
յամին։ Այսց իւրաքանչիւր ումեք տուե-
ալ է յայտնութիւն հոգւոյն առ իւրա-
քանչիւր •գուտ։ Ումեմն ՝ի հոգւոյն
տուեալ է բան իմաստութեան, այլում
բան գիտութեան ըստ նմին հոգւոյ։ Ա՛ի-
սուսեան հաւատք նոյնին հոգւով, այլում
շնորհ բժշկութեանց նոյնին հոգւով։ Ա՛յ-
լում յաջողութիւն զօրութեանց՝ այլում մար-
գարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոց,
այլում ազգք լեզուաց, այլում թարգ-
մանութիւն լեզուաց։ Ա՛յլ զայս ամ յա-
ջողէ մի և նոյն հոգի, և բաժանէ իւ-
րաքանչիւր որպէս և կամի։

Ա՛լէլուիա, ալէլուիա։ Ո՛ գործս ձե-
ռաց մերոց ուղղեսցես ՝ի մեզ տէր։
և զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ։

Աղօթք։

Սէր Ա֊ստուածոյ Յ֊Ե֊Ր֊Ե֊Ց֊ո֊ց Ա֊ստո՛ւ֊ած։
Յետ յարուցեալ սուրբ մերոյ Յի֊սուսի քո֊ւ։

Ասկ մեռեալան աշակերտքն գնացին ի գալիլեայ ի լեառն՝ ուր ժամադիր եղև նոցա յա֊Ր֊ա֊ւ տեսին զնա՝ երկիրպագին նմա, և ոմանք երկուացան։ Եւ մատուցեալ յա֊Ր֊ա֊ւ խօսեցաւ ընդ նոսա և ասէ. տուաւ ինձ ամ իշխանութիւն յերկինս և յերկրի, ա֊Ր֊ա֊Ք֊ե֊ց զիս հայր, և ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսուհետև աշակերտեցէք զա֊մ֊ե֊Ն֊ա֊ս֊ս֊ս, մկրտեցէք զնոսա յա֊ն֊ո֊ւ֊ն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ։ Ուսուցէք նոցա պահել զա֊մ֊ե֊Ն֊ա֊ս֊ս֊ս՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ։ Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զա֊մ֊ե֊Ն֊ա֊ս֊ս֊ս աւուրս մինչև ի կատարած աշխարհի։

Փառք հեղ հեր ած մեր։

Վարդան։

Ա֊ման Յ֊Ե֊Ր֊Ե֊Ց֊ո֊ց Հոգւոյն սրբոյ

սէր ի վերայ աշակերտիս այսորիկ և
մեր ամենեցուն՝ զտէր աղաչեսցուք։

Տէր աղէ՛։

Ա՛յ մաքրել պայծառացուցանելոյ ըղ-
միտս սորա յամ աղտեղութէ մեղայ, և
ի տգիտութէ խաւարային խորհրդոց
և բանից՝ զտէր աղա՛։

Ա՛ն առաջնորդել սմա յամ առա-
քինի վարս, և ի խորհուրդս պատուիրա-
նապահութե՛ն՝ զտէր աղա՛։

Ա՛յ պարգևելոյ սմա ղպարգևս ծա-
ւիլն անհուն ողորմութե՛, ի ձեռն ար-
դար վաստակոց, և բարի քաղաքա-
վարութեց սորա՝ զտէր աղա։

Ա՛յ ամօթխածութէ՛ և խոնարհութ-
ե՛ ծնեալոյ սորա առաջի ն՛ոյ և երախ-
տաւոր ծնողաց իւրոց՝ զտէր աղա՛։

Ա՛յ խառնելոյ ճշմարիտ քաղցր օրհ-
նութէ՛ ի վաստակս ձեռաց սորա, և
ամ ժողովրդեանս՝ որք շուրջ կան
զմեօք՝ զտէր աղա՛։

Ա՛յ անփորձ և անսասան պահելոյ ըղ-
սա յամ յորոգայթից սատանայի, և ամ

ձախորդուեց աշխարհիս՝ զտեր աղա՛։
Այլ լսելի լինելոյ ասս ոյ ձայնի աղա-
չանաց մերոց, և կատարելոյ զբաւարի
խորհուրդս մտաց սորա և մեր ամե-
նեցուն՝ զտէր աղա՛։
Լե՛ւ ևս միա՛։ Ո՛ անձինս մեր՛։
Ողորմեաց մեզ տէր՛։
Տէր ողորմեա՛. եր ողորմեա՛. եր ողո՛։

Ա. ղօթ.

Տէր Ա՛ծ ամենակա՛լ արարիչ եր-
կնի և երկրի, երևելեաց և աներևու-
թեց. առ քեզ կարդամք խնդարհեալ
անձամբ, և հայցեմք զթութե՛ւն ի քէն։
Նայեա՛յ տէր՝ յաղաչանս մեր, ընկալ
զխնդրուածս ծառայից քոց. և պար-
գեւեա պատատ ողորմութի՛ւն քո ամ հա-
ւատացելոց յանուն քո, մանաւանդ
ծառայիս քո այսորիկ՝ որ կրթեալ զան-
ձըն իւր պարկեշտ վարուք, և առա-
քինի գործովք, և կեցեալ մինչև ցայ-
սօր ի քաղաքական և ի կենցաղո-
գուտ յուսումնասիրութիւնս ըստ դաստիա-

րակուբ ուսուցչի իւրոյ, կամ այժմիկ առնուլ զօրհնուիս քո ի ձեռն մեր, և լինիլ ինքն իբրև զմի ի քեզահաճոյ և ի բարեվաստակ արանց, և ուսուցիչ այլոց՝ գործակցութիւք ոմանց մերոյ և փրկչիդ յիւ քրիստ Յս. Դու մարդասէր և ողորմած տէր՝ որպէս ըստ անչափ բարերարի կամաց քոյ ի սկզբանն օրհնեցեր զնախահայրն մեր զադամ, և զնա ժառանգս նորա, պարգևելով նոցա զկարողուիս գործելոյ զամ, և ուսուցեր նոցա զկարևոր և զկենցաղօգուտ արուեստագիտուիս. որով կրթեալ նոքա զկնի արտաքսմանն ի դրախտէն հնարէին զնարա կեցուե իւրեանց, և վայելեալ զանչափ պարգևս առատ ողորմութիւնե քո փառաւորէին զամենատառատ տէրութիւնն քո, նոյնպէս օրհնեա ❋ և այժմ զծառայս քո զայս՝ առաջնորդելով սմա ի գործս բարիս, և յաջողեա զամ գործս ձեռաց նորա, հեռի պահելով ի սմանէ զամ

սատանայական չար սովորուն, խա-
բեբայական պատրանս աշխարհի, և
գաւելորդ ընչասիրուն և զախտս անա-
յած ազահուե· որով միշտ սովոր են
մարդիկ կորուսանել զհոգիս իւրեանց
թիւրելով զուղիղն՝ և կորուսանելով
զյարգ պատուական արուեստից իւրեանց
և բարի վաստակոց՝ ի պատճառս ցան-
կուե անիրաւ ստացուածոց։ Ա՛յլ դու
բարերար և մարդասէր տեր՝ որպէս
օրհնեցեր ամենաքաղցր բերանով քով
զաբրահամ, զիսահակ, զյակոբ, և ըզ-
ժառանգս նոցա, նախ զայս հոգւոյ
նոցին լուսաւորելով և վառաց քոյ
արժանաւորս առնելով, և ապա ըզ-
մարմնական գործս ձեռաց իւրեանց՝
աձեցուցանելով և բազմացուցանելով,
նոյնպէս օրհնեա ✠ և այժմ զերկըր-
պագու ծառայս քո զայս, և որպէս
զաբրահամուն զիսահակայն զյակո-
բայն, և զայլ նահապետաց, աձեցո և
բազմացո զվաստակս ձեռաց սորա, և
արժանի արա անսպառ ողբմութեաւ և

ան-

անչափ գթութե՛ք քո. զի դու օրհնեցեր
զայմ գործս ձեռաց մարդկան, և ան-
սուտ բանիւ քով սահման եդեր ՚ի
վերայ ադամայ նախահօրն մերոյ, ա-
սելով քրտամբք երեսաց քոց կերիցես
զհաց քո, մինչև դարձցիս ՚ի երկիր,
զոր առաչանաց մերոց մարդասէր
տէր՝ և յաջողեա զայմ վաստակս և
զգործս ձեռաց սորա. փրկելով յայմ
ձախողակի փորձանաց և ՚ի պատահիցդ
աշխարհիս, այս զոր ինչ զող ջակեղս
և պատարագս ՚ի բարի վաստակոց իւ-
րոց մատուցանելոյ եղեք քեզ պարգե-
ւօղիդ մեզ զայմ բարութիս, դու որպէս
զաբելին, զնոյին, և զաբրահամուն
ընկալ ՚ի հաճոյս քո մարդասէր տէր,
և զտրիտուրն պարգեւեա սմա զան-
վախձան զերկնից արքայութիդ՝ զի
անդադար փառաւորեսցէ զքեզ ընդ
որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և՚:

Խաղաղութիւն:

Աղբ՝ խնդրեմք ՚ի քէն բարերար
և բազումողորմ ած՝ նայեցիր յերկիրս

պագուհս մեր, խոնարհեաց յաղաչանս
ծառայից քոց. և ունկնդիր ձայնի խըն-
դըրուածոց մերոց։ Օ՚ի ՚ի քեզ եմք
ապաւինեալ՝ և քո առատ ողորմուեդ
և անսպառ գթուեդ փափագիմք։
Ըրհնեա տէր՝ զգործս ձեռաց ծա-
ռայից քո այսորիկ, և փրկեա զսա յամ-
բար փորձանաց դիւաց, և ՚ի սնոտի
պատրանաց նորա։ Ըրհնեա տէր՝
զաշակերտս զայս, և զուսուցիչ սորին,
պարգևելով սոցա զպետս մարմնական
պիտոյից իւրեանց, զապրուստ անձանց,
և արդիւնաբերս առնելով զվաստակս
և զաշխատանս ձեռաց սոցա։ Որպէս
զաբրահամայն օրհնեա, որպէս իսահա-
կայն և զյակոբայն, և որպէս զերա-
նելոյն յոբայ աձեայն և բազմայն ըզ-
ժառանգս որդեծնութե սոցա, և զայլ
բարութիս։ Պարգևեա սոցա տէր զա-
ռողջ կեանս, զառաքինի վարս, և ըզ-
համաստաբարոյ երջանկութիս. որով ք
կարասցեն սոքա ուղիղ հաւատով, և
և աներկմիտ յուսով հանապազ կար-

դալ առ ամենամեծ տէրութիւնն քո, և
վայելել զանսպառ բարութիւնս քո ի վի-
Հակս բարբրուէ խրեանց։ Աղրապլնա-
տեաւ տէր՝ ի միտս սոցա զերկիւղ Ա-
պատուիրանաց քոց, և տուր սոցա զի-
մաստուն՝ զբարիս խորհիլ և խօսիլ և
գործել առաջի քո յամէն ժամ ի չար
խորհրդոց, ի բանից և ի գործոց
փրկեա զսոսա, և վարձատրեա դու-
սուցիչս զայս յանսպառ գանձուց Թա-
գաւորութեանդ քո. և մեք գոհանալով փա-
ռաւորեսցուք զՀայր և զորդիդ և զՍբ
Հոգիդ յաւի՛։
Ամ՛ բ խաչիւս՛։ Պահպա՛։ Հայր մեր՛։

Կաճառ՝ Պ՝ժուարաճին Յղի Կնոջ,

Ընդ՝ փոխանայն, և ասէ ոտանաւոր։

Ընդ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ
բնակեալդ ես ի յերկինս։

Ընդհերցուածոյ այսոցեայ մտիւրէք ։

Ա՛ինչչէ ինձ յղեալ ծնեալ և մինչև
չև հասեալ ինձեն ցաւք երկանց,
ապրեցաւ և ծնաւ արու։ Ա՛ր լուաւ,
ո՞ եռեա այսպիսի լինչ. եթէ երկնեաց
երկիր ի միում աւուր, և ծնաւ ազգ
մի ողջոյն միանգամայն. զի երկնեաց
սիոն, և ծնաւ զմանուկս իւր։ Այս ե-
տու քեզ զկոյդ զայդ, և դու ոչ լի-
շեցեր զիս՝ ասէ տէր. ո՞չ ապաքէն
զամուլն և զծննդականն ես արարի՝
ասէ ած քո։

Պէտք ասացէլոյն այնբոյեցասոց ընդհանի
և ընդերցուածոյ։

Յաւատով՝ որ աբրահամ կոչեցաւ՝
ունկն դիր երթալ ի տեղին զոր
առնոյց էր ի ժառանգուի. եւ գնաց
և ոչ գիտեր յոր երթիցէ։ Յաւատով
պանդխտեցաւ յերկիրն աւետեաց՝ իբ-
րեւ յօտարուե. խորանօք բնակեաց սա-
հակ և յակոբ հանդերձ՝ ժա-
ռանգակցօք նոցին աւետեաց։ Քանզի

զի ակն ոչնեը հիմամբք հաստատեալ քաղաքին, որոյ Ճարտարապետ և արարիչ ած է։ Հաւատով ևիւքն սառա՝ որ ամուլն էր, զօրութիւն առնոյ զսերմն որդեծնութեան ընդունելոյ, և՝ ի տարաժամ հասակի ծնանիլ։ քանզի հաւատացեալ համարեցաւ զայն որ խոստացաւն։ Ասն որոյ և՝ ի միոջէն ծնանիլին, և այն՝ ի յանցեալ ժամանակի, իբրև զաստեղս երկնից բազմութիւ, և իբրև զաւազ առ ափն ծովու առանց թուոյ։

Եղէ՛ ալէ՛։ Ո՛ տէր փրկեա զանձն իմ. ողորմած և արդար է տէր Աստուածս մեր, ողորմի և պահէ զաղայս տէր։

Եղէլուիա Օրհնի։

Սէյ Ա՞ռնէս Յէ՛Ռ՛Ն՛ որ ըսա Յօհան՛։

Տէրն մեր Յի՛Ռ՛Ն՛ ասէ։

Ամէն ամէն ասեմ՛ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք։ և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հա-

սեալ է ժամ նորա. այլ յորժամ ծընցի զմանուկն, ոչ ևս յիշէ վշտացն վասն խնդութեան. զի ծնաւ մարդ յաշխարհ:

Բ Ա Ր Ո Զ:

Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց. ամենակալ տէր ամ մեր կեցուսցէ և ողորմեսցի:

Ա՜ս տհիմնոյն ասէ զ՝ պէտ ողջմէ՛, և ապա պաշտօնս պայծառ:

Տէր ամ մերոյ քո՝ մեծ և բարձրեալ անապականելի անփոփոխելի և միշտ ջենաւոր. որ իջեր ի յերկնից և մարմնացար ի սրբոյ կուսէն Մարիամայ հոգւովն սրբով. և զապականեալն մեղօք զբնութիւն մեր ի նախահօրն յանցանացն՝ որով ամ կանացի բնութիւն կնկալաւ զպատուհաս անիծից՝ ցաւոք և տրտմութիւն ծնանիլ զգաւակ, սրբեցեր ամ քովն: Այս արդ՝ աղաչեմք զքեզ մարդասէր Թագաւոր՝ առեղծող և նորոգող մեր՝ և բժիշկ հիւանդութեանս մերոյ, բժշկեա և առող ջացո զայս ա՜ն՝ աշխարհն քո ի հոգեկան և ի մար-

մարմնական յախտից յայսմանէ։ Քա-
քեա զօգնուիլ քո ի սրբուհէ քումմէ,
և տուր սմա զօրուիլ ծնանիլ զզաւակ.
որպէս զի զկտուր սրուիայնի իւրոյ մնաք-
րեալ յամ արատոյ ծննդեամբ սբ ա-
ւազանին՝ ընծայեսցէ եկեղեցւոյ քում
սրբոյ։ Շնորհեա ծննդականիս այս-
րիկ հանդարտուիլ և առանց վշասու-
հասանիլ ի խնդուիլ. և ամ տանց հա-
ւատացելոց աձիլ և բազմանալ ի
փառս տէրուհէ քո, և ի լրումն ծա-
կին քո բանիդ, եւթէ աձեցէ՛ք և բազ-
մայարիւք։ Կայ՝ տէր ամ մեր, լուր
և այժմ խնդրուածոց անարժան ծա-
ռայիս, և ամենեցուն որ շուրջ կան
աստ, բարեխօսուիք անարատ ծնողի
քո սուրբ ածածնի, և ամ սրբոց քոց։
Օ՜ի քեզ վայելն որդւոյդ, և անըս-
կիզբն և համագոյ հօր քո, և կենդա-
նարար և ամենասուրբ հոգւոյդ՝ վա
յելէ փառք պատիւ և երկրպագուիլ.
այժմ և՛։

Կանոն՝ փարատելոյ զտուն նորածին մանկանց.

Երկնայ փառաւոյն՝ ի տուն նորոգելոյ. և սուրհանդակն փրկութեան ողբալոյ ազաչեսցուք ընկալ կեցոյց և ողորմեաւ. Փառս Հաղթողին Օրհնութեան և փառք հօր և որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ. Այժմ և միշտ և յաւիտեան. Ամէն. Շարական. Ձկնորսուկդ մեծ և սքանչելի՝ որ յայսմ աւուր յայտնեցաւ. Հովիւքն երգեն ընդ հրեշտակս տանդ աստուծոյ աշխարհի. Ոնաւ նոր արքայ՝ ի քեզ ծնեալ է. Ոչ հեմ քաղաքի Արդեք մարդկան օրհնեմ զքեզ՝ զի վասն մեր մարմնացար. Նոյպա՞ էլլեն երկնի և երկրի՝ ի խաչս ձարուրս պատեալ. Ոչ մեկնեալ ի հօրէ՝ սո՞ւրբդ այրին բազմեցաւ. Այսօր ընծան երկինք՝ ի վերուստ մեծապայծառ աւետաւք. և արարածք ամ զգեցան հանդերձ փրկութեան. Այսօր յայրին ընծայեցաւ քրիստոս որդին ամ. և հրեղինայ բազմութիւնքն երկնից երկիր վայր իջեալ. Այսօր

սօր հովուացըն տեսեալ զարդա՜ ըուե
արեգակն՝ և ընդ հրեշտակս երգէին
փառք ի՛ բարձունս աշ՛. ևե։
Ա՛լէ՛ ալէ՛։ Ուրախ լեր բերկրեալդ
ար ը քեզ օրհնեալ ես դու ի կանայս,
և օրհնեալ է պտուղ որովայնի քո։

ՈՐԹԻ։

Սէյ Ա՜հպնէո Յն ՀՅՆ ոը ըսո Ո՜ո՛։
Ա ան ծննդեան և յայտնուե ան մերոյ

ՅԵՒՐԵ։

Ն՛ հովիւքն էին ի տեղւոջն յայնմիկ
բացո՛թեալք որ պահէին զպահպանու՛ես
դիշերոյ հօտից իւրեանց։ Ն՛ հրեշտակ
Տեառն երևեցաւ նոցա, և փառք Տն
ծագեցին առ նոսա, և երկեան երկիւղ
մեծ։ Ն՛ ասէ ցնոսա հրեշտակն. մի
երկնչի՛ք՝ զի ահաւասիկ աւետարա՜
նեմ ձեզ ուրախութի՛ մեծ, որ եղիցի
ամ ժողովրդեանն։ Զի ծնաւ ձեզ
այսօր փրկիչ, որ է օծեալ տէր ի քա՜
ղաքի դաւթի։ Ն՛ այս նշանակ ձեզ.
գտանիցէք մանուկ պատեալ ի խան՜
ձարուրս, և եղեալ ի մսուր։ Ն՛

յանկարծակի եղև ի հրեշտակին ընդ
այնմիկ բազմութենէ զօրաց երկնաւորաց
որ օրհնէին զԱստուած և ասէին փառք,
բարձունս այլ, և յերկիր խաղաղութիւն,
ի մարդիկ հաճութիւն։

Ա–յոյժ համառօտ այ–յմ ժամս, պարս–

Ձեռն ատենագրի պատմութեան

Նա եղև իբրև վերացան ի նոցանէ
հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս
հովիւքն. եկայք երթիցուք մինչև
ցբեթղեհէմ, և տեսցուք զբ՞նչ է
բանս այս՝ որ եղև, զոր տէր եցոյց
մեզ։ Նա եկին փութանակի և գտին
զՄարիամ և զՅովսէփ, և զմանուկն ե-
դեալ ի մսուրս։ Նա ծանեան վասն
բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն։
Նա ամենեքեան որ լսէին, զարմանա-
յին վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ
նոսա հովիւքն։ Նա Մարիամ զամ՛զբանս
զայսոսիկ պահէր, և խելամուտ լինէր
ի սրտի իւրում։ Նա դարձան հովիւքն,
փառաւորք առնէին և օրհնէին զԱ՛ծ
վասն ամենի՝ զոր լուան և տեսին. ոպ

պատ

պատուեցաւ հուցա. Կու ապա ասասցեն
զմնացեալսն ի փառաց ի բարձունսն։
Ողորմեա մեր Տէր։ Պահպանիչ և։
Հայր մեր որ յերկինս ես։

և պատկեր նորին բարերարուեցաւ։ Որ
և կենդանարար. կերպարան հօր,
Տէր մեր յն քս՝ որդի այլ կենդանի
տեր ձայլ։

Աղօթեա հնձ ասճ լը մե՛։ կամ Լուիցէ
աստղոս։

հեռացեն չքերան պղծեալ ատանին. և ասէն
Ջո՞րն ի պատրաստ ունիցին։ Ամհար-
նեալ ի բաց հեղցեն. և զյայտնութիւն
և փառաւորան ամեն ի պղծեալ նեխելոյն հա-
էիցէ նեխեալ՝ հոտցեն և ի բաց չգեռցեն.
Երբ անչցէ ի մէջ ասցա պղծ չէնոփանէ, որ
նեղոյ. (յր) իւղոյ՝ մեղու՝ ձիթոյ՝ գի-
նեղոյ, ընկուզոյ, և կաթնեն. ևայ։

կանոն՝ Թացեղէն պղծեալ նիւթ օրհ-
Տէր մեր որ յերկինս ես։
Ողորմեա խաչիւս աղի։ Պահպանիչ և։
զմնացեալսն ի փառաց ի բարձունսն։
պատուեցաւ հուցա. Կու ապա ասասցեն

մարմնով քո գալստեան՝ և հրաշալի
անօրէնութիւնդ՝ հրամայեցեր ասել
(Թէ ոչ որ ընդ քեզ ման մարդոյ մտա-
նէ կարէ պղծել զմարդն) այլ ամ ինչ
սրբոցն և հաւատացելոց սուրբ են ըս-
բանի հրամանաց քոց։ Որ և ի ձեռն
անօրէնն ընտրուէ սրբոյն պօղոսի ա-
ռաքելոյն՝ ուսուցեր զամ ստեղծեալսն
ի քէն սուրբ ասել այնոցիկ՝ որք հա-
ւատանն. և չիք ինչ խոտան ի նոսա,
որք սրբին բանիւն իմ՝ և աղօթիւք մեր։
Ընդ՝ աչերսմբք և պաղատիմբ առ
քեզ. դու տէր՝ նայեաց ի մեզ այժմ.
գթած ի տկարուիս մեր. և օրհնեալ
սրբեա զնիւթս գայս ցօրուբ ամենա-
զօր շնորհաց քոց և մարդասէր խնա-
մօք քո. նա և ի ձեռն սուրբ ջրոյս՝
որ անուամբ քով սրբեցաւ յաւուր մե-
ծի լուսափայլ մկրտուէ քո՝ և շնոր-
հեցաւ մեզ յօրհնուէն և ի սրբուէն։
Սրբեա սուլաւ գկերակուրս և գըմպե-
լիս սրսկելով մեր զսա ի վերայ ա-
նօթոյս և պիտոյիցս, զորս եդուր ի

վայելը բանսաւոր հօտիդ քոյ Պօղ տէր
ամ մեր՝ հեռացուցեալ մերժեա՛ ի
մտաց ծառայից քոց զնմտի խիղճս.
շնորհեա մեզ յուսալ միայն ի քեզ՝
հաւատալ բանի քո և անդատապարտ
պահիլ առաջի քո։ Եւ ձաշակեալ ի
սմանէ զոհանալիք զսուրբ անուանդ
քումմէ, Օ՛ի դու ես սրբութի՛ն ամ
արարածոց. և քեզ փառս մատուցա-
նեմք ըզ հօր և ամենասուրբ հոգւոյդ.
այժմ և միշ։

Ն՛ա ապա ժամադրեն ուխտն ի սբ յոյս-
նոյէ ըզոյն խոստանալ ի յոմանցն և ասէ։

Երկնեսցի՛ և սրբեսցի նիւթս և ա-
մանս յանուն հօր և որդւոյ և հոգւոյն ասէ։

Պատ ասէ վ՛ղօխ։

Տէր ամ մեր որ միայնդ ես բարերար
և մարդասէր. որ սուրբ ես և ի՛ սբս
հանգուցեալ. որ առաքելոյն քո սբո-
ցըն պետրոսի՝ ի զարմացմանն ցու-
ցեր. ոչ անսուրբ և պիղծ ասել՝ զորս
ի՛ քէն տուեան կերակուր ի վայելս

մարդկան։ Որ առ քոյով Հշմարտու-
թեամբդ օրինադրեցեր (Թէ որ ինչ
ընդ բերան մտանէ, ոչ կարէ պղծել
զմարդ։) Դու նոյն ինքն որ՝ ի ձեռն
վարդապետուե սրբոյ առաքելոյն քոյ
որք զառ ի քէն սահմանեալսն հաս-
տատեցին յեկեղեցի քո սուրբ. լուսա-
ւորեա և այժմ զմիտս ծառայից քոց՝
դիտել և իմանալ՝ Թէ ոչինչ է պիղծ
յարաբածս քո՝ ի վերայ որոց և իցէ
ուտելեաց։ Այլ և որք ստեղծան յա-
րարչէդ մերմէ, բարի և լաւ ըստեղ-
ծան։ Այսն որոյ կոչմամբ մեր զա-
հաւոր անուանդ՝ և կարկառմամբ ըղ-
նշան սուրբ խաչիս ❖ ի վերայ նիւ-
թոցս, դու ինքնին օրհնեա և սրբեա
զսոսա յամէ գաղանային դաժանուէ՝ և
յամէ չար նիւթոց նորա. և պահեա
զմեզ յամէ խլչմտանաց անոտեաց. ա-
նախտ և անբիծ՝ որք ձաշակեմք ի
սմանէ՝ մինչև ցելս հնչեցս մերոյ։ Ո՞վ
դու եա որ օրհնես և սրբես զամ ա-
րարածս քո. և քեզ վայելէ փառք

Ա.ԼԷ՛ ՏԷ-ԵԱ ԱԼԷ՛ ՏԷ-ԵԱ։
Սիրա սուրբ Հասատառեա՛։
Ա.ԼԷ՛ որթիւս Լսաղաղուե ամենեցուն,
ՍԲԱ.-ՔՆԵԱ ՅՆ ՐՆ՝ որ ԷԱՈ Ա՛որ՛։
ՏԷՐՆ մեր ՅԱ ՎՀՆ։

Նա կոչեալ առ ինքն զամ ժողովուրդն, ասէ ցոսա. լուարուք ինձ ամենեքեան՝ և իմիտ առէք։ Ոչինչ արտաքուստ ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ի նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ ԵՒ իբրև եմուտ ի տուն յամբոխէ անտի, հարցանէին ցնա աշակերտքն վա առաջկինն։ ԵՒ ասէ ցոսա այդպէս և դուք անմիտ էք, ոչ իմանայք՝ եթէ ամենայն արտաքուստ ի նէրքս մտանէ ի մարդ, ոչ կարէ զնա պղծել. զի ոչ եթէ ի սիրտ նէր մտանէ, այլ յորովայն՝ և արտաքս ելանէ. և սրբէ զամենայն կերակուրսն։ ԵՒ ասէր, թէ որ ինչ ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ։

Ամէն խա՛։ Պահպա՛։ Հայր մեր որ՛։

Աղօթ Խաչիկ օրհնելոյ.

Ո՛ մեծահաւատ տէր ամենակալ, որ ընկալար զխունկն ի ձեռաց ահարօնի և որդւոց նորա, և ոչ հաճեցար ընդ հուրն օտար, և ընդ խունկն օտարոտի, վասն որոյ և մեք սարսափիմք և դողամք, զի մի զնոյն կրեսցուք պատիժ: Այժմ աղաչեմք զքեզ տէր բարերար, ընկալ զսա ի ձեռաց մերոց, որպէս ի ձեռաց ահարոնի ընկալար, և զաքաւրիայն, և պարգեւեա մեզ զչնորհս հոգւոյդ սրբոյ. Արժեա ի մէնջ զայմ ահաւորութեն խաւարասէր Թշնամւոյն, և տուր մեզ առնուլ ի միտս զահ և զերկիւղ ամենեցուն. Շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին յի քէ, որում վայել փառք իշխանութիւն. այժմ և՝:

Ա՛ղօթք՝ վասն երաշտի եւ ցամաքի։

Տէր ամ՝ որ յաղագս առ քեզ նախանձու՝ լուար եղիայի մարգարէին և անձրեւ այոյզ անձրեւ հրամայեցեր խափանել։ Նոյնպէս դարձեալ յաղագս խընդրոյն նորա, ցօղ պաղատգեաստ շնորհեցեր։ Դու տէր ամի՝ զքո գթութենդ բարեխօս ունեալով, անձրեւ ըստ կամայ քոց պարգեւեա ժառանգութեանդ քո՝ և զբաւմամեղուինս մեր անտես արա՝ և զանձրեւս քո կարկառեա, որք պէտս ունին և խնդրեն ի քէն։

Ուրախ արա զերեսս երկրի՝ յաղագս աղքատաց և անսանոց, տղայոց և ամ՛ ժողովրդեան քո՝ և այլոց ամենեցուն, որք ակն ունին ընկալնուլ զկեր ակուր ի ժամու։ զի դուք տէր ամ մեր, և ի քէն է կեցուցանել։ և քեզ վայել փառք պատիւ և երկրպագութիւն. այժմ և միշտ և յաւիտ։

Ամէն մեր։

Լանդն՝ վան Աչահաց և լուս-
նոտից։

Աչ չափանց աղջուս։

Որ քնակեաչն է յոգնու է բարձրելոյն
ընդ հովանեաւ այ երկինս հանգիցէ։
Գիմն լոն ատ։

Ընդբոյոտ յԱյսոյեայ մոգպետէ։

Օ՛իմքդ անկաւ երկինց արուսեակն՝
որ ընդ առաւօտն ծագէը. անկաւ յեր-
կիր, խորտակեցաւ՝ որ առաքէը առ
ամ ազգս, դու ասէիր ի մտի քումմ։
Ելից յերկինս, ի վերոյ քան զաստեղս
երկնից արկից զաթոռ իմ։ նստայց ի
լերինն բարձու, ի վերոյ լերանց բար-
ձանց հիւսիսոյ։ Ելից ի վերոյ քան
զամպս, եղէց նմանող բարձրելոյն։
Այդ՝ ի դժոխս իջցես, և ի հիմունս
նոս երկրի։

Պօղոսէ առաքեալն յերկրայեցաւոյ ընդ նոյն
է ընթերցուածս։

Արդ՝ որովհետև մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութիւ կցորդ եղև նոցունց՝ զի մահուն իւրով խափանեսցէ զայն՝ որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է՝ զսատանայ, և ապրեցուսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ի ծառայութիւն։

Աղէ՛ ալէ՛։ Օ՛ թշնամիս իմ հալածականս արարեր, և զսաեւլիս իմ սատակեցեր։

Սէյ Աւ՞տնէ՞ Յէ՛ վո՛ւ՞ որ ըսա Ա՞ր՛։ Ու Տէրն մեր յիշ՛եցո՛։

Պատասխանի ետ մի ոմն ի ժողովրդենէն՝ և ասէ. վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր. և ուր հասանէ՝ զարկուցանէ զնա, և փրփրէ, և կրճտէ զատամունս իւր՝ և ցամաքի. և ասացի ցաշակերտսն քո

կի հանցեն, և ոչ կարացին հանել զնա։
Պատասխանի ետ նոցա և ասէ. ով
այգի անհաւատ՝ մինչև յե՞րբ իցեմ ընդ
ձեզ, մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ. ա-
ծէ՛ք զնա առ իս։ Եւ ածին զնա առ
նա։ Եւ երբեմն տեսս զնա այսն, վաղվաղա-
կի շարժեաց զնա, և անկեալ կերկիր
Թաւալէր և փրփրեայր։
Հարց ցհայր նորա և ասէ. քանի՞ ժա-
մանակք են՝ յորմէ հետե այդ եղև դմա։
Եւ նա ասէ. ի մանկուէ բազում ան-
գամ ի հուր արկանէ և ի ջուր՝ զի
զնի կորուսցէ զդա. արդ՝ եթէ կարօղ
ինչ ես, օգնեա մեզ տէր գԹագեալ
ի վերայ մեր։ Եւ Յի՞ ասէ ցնա. ա-
սացեր՝ եթէ կարօղ ես. ամ ինչ հը-
նարաւոր է այնմ որ հաւատայնի
Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր
մանկանն՝ և ասէ. հաւատամ, օգնեա
անհաւատութեես իմում։ Երբեմն տեսս
Յի՝ եթէ կուտի ժողովուրդն ի վե-
ռասուեաց այսմն պղծոյ՝ և ասէ. համ-
բերդ՝ և խուռ այս՝ ես տամ քեզ հրա-

ման, ել ՚ի դմանէ, և այլ ևս՝ մի
մտանիցես ՚ի դու։ Այս աղաղակեայ՝
և յոյժ լսէից զնա՝ և ել և եղև պա-
տանեակն իբրև դմեռեալ, մինչև բազ-
մաց իսկ ասել ՚ի թէ մեռաւ, Այս յն
կալաւ զձեռանէ նորա յարոյց զնա, և
կանգնեցաւ։ Այս իբրև եմուտ նա ՚ի
տուն, աշակերտքն առանձինն հարցին
զնա. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հա-
նել զնա։ Այս ասէ ցնոսա. այդ ազգ՝
ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և
աղօթիւք։

Այս գնէ պետրոսն ՚ի վէրոյ գլխոյ
այսոհարկն, և ասէ։

Աստեւսցէ քեզ տէր մեր յն քն՝ պիղծ
սատն, որ եկն յաշխարհ և շրջեցաւ ընդ
մարդկան, զի զքոյդ խափանեսցէ ըզ-
բունութի՝ և զմարդիկ ապրեցուսցէ։
Որ ՚ի վերայ փայտին գընդդիմակաց ղօ-
րութեան խարտակեաց՝ արեգականն
խաւարեցուց, երկիր շարժեցուց, գե-
րեզմանացն բանալով, մարմինք սրբոց
յառնել լսի։ Որ եւթն մահուամբ ըզ-

մահ, և խափանեց որ զունելոյն մա-
հուն ուներ, այլինքն է՝ զքեզ սատկ-
Աղաչեցուցանեմ զքեզ յԱծ կենդա-
նի՝ որ եղոյց զփայտն կենաց, և կար-
գեաց զքերոբէն և զսերոբէն բո-
ցեղէն սրով շուրջանակի պահել զնա,
պապանձեաց եւ և գնա՛ ի սմանէ։
Աղաչեցուցանեմ զքեզ ՚ի տէր մեր
յՍ քս՝ որ գնայր որպես Ը ցամաք ՚ի
վերայ ծովուն, և սաստէր պատուհաս
հողմոյն. որոյ հայեցուածն ցամաքե-
ցուցանէ զանդունդս, և սպառնալիք
նորա մաշէն զլերինս. Նոյն Ի՛նքն և
այժմ հրամայէ քեզ ՚ի ձեռն մեր, ե-
կիր եւ և գնա՛ ի սահմանս ծո-
վիկ. և մի դառնայցես և մի ձախիցես
՚ի սմա. և մի ևս պատահեսցես ու-
մեք ՚ի ոտանէ. կամ ապդիցես, կամ
զարկցես, մի ՚ի գիշերի, մի յա-
ւուր, մի ՚ի ժամու կամ տաբաժամու.
այլ երթիջիր ՚ի քոյին խորխորատն
մինչև ՚ի պատրաստել տանջանաց քեզ
մեծի աւուրն դատաստանին։ Երկիր

յայլ որ նստի յաթոռ քեռաբեից և հա-
յի յանդունդս. յորմէ դողան հրեշ-
տակք, հրեշտակապետք, աթոռք, տէ-
րութիւնք, իշխանութիւնք, պետութիւնք, բազ-
մաչեպ քերովբէքն. յորմէ դողան եր-
կինք և երկիր, ծով և ամ որ ի նո-
սա. ել և գնա ի ծառայէս քեզ այդ
Ընդմեջեցուցանեմ զքեզ յայծ կենդա-
նի՝ որ գնայ ի վերայ Թևոց հողմոց.
և արար զհրեշտակս իւր յոգիս, և ըզ-
պաշտօնեայս իւր ի բոց հրոյ. ել և
գնա ի առեղծուածոյս այդ յայտնել
ամ հրեշտակօք քո։
Օ՜ի օրհնեալ և փառաւորեալ է ա-
նուն ամենասուրբ երրորդութեանդ հօր և
որդւոյ և սուրբ հոգւոյն. այժմ և՝
Ընդ որ մեծ է և ահաւոր՝ և փառա-
ւորեալ յամի գործովք և զօրութիւք,
անհասանելի և անքննելի գոլով. որ
յառաջ պատրաստեց քեզ սրինդ՝ զյա-
յիսեանական տանջանացն զդատաստան.
այժմ ի ձեռն մեր անպիտան ծառա-
յից իւրոց հրամայեաց քեզ և ամե-

նայն գործակցաց քոց՝ ամ զօրութիւք
քով՝ ի քաց կալ՝ ի ծառայէս քո՛ քի,
որ զամ իշխանութիւն ունի երկինս և
երկրի. որ ասաց համեր և խոսել դա-
լին, եւ՝ ի մարդոյդ և այլ մի մտա-
ներ՝ ի դմա։

Յանիր զքո պիղծ և ունայն զօրութիւդ,
որ և խոզին իշխանութիւն ոչ ունէին։
Յիշեա՛ որ սաստեացն քեզ, և քոյով
խնդրուածով զ երամակ խոզին հա-
րամայեց քեզ մտանել։ Երկիր յոյ՝
որոյ հրամանաւ երկիր հաստատեցաւ
՝ի վերայ ջուրց. որ շինեաց զերկիր և
կարգեաց. որ հաստատեաց զլերինս
կշռով, և զառապարս կշռորդով. և
եդ զաւազ ծովու՝ ի սահման, և՝ ի
ջուրս սաստիկս զշուեղս իւր պատ-
րաստեաց։ Որ հայի՝ ի լերինս և ծը-
խեացին. որ արկանէ զլոյս որպէս զօ-
թոց. որ ձգեաց զերկինս որպէս մա-
գաղաթ. որ յարկեաց՝ ի վերայ ջրոց
զվերնայարկս նորա։ Որ հինեցոյց
զերկիր՝ ի վր հաստատուն, զի մի շար-
ժե-

ժեսցի յաւիտեան։ Որ կոչեաց զՋուրա
ծոլու, և երեղ զնա ի վերայ ամ
երկրի։ Ել և գնա ի սմանէ։
Երդմնեցուցանեմ զքեզ ամենաչար՝
ի փրկական չարչարանն քեզ, և ի
պատուական նորա մարմին և յարիւն,
և ի գալուստն նորա ահաւոր. զի գայ
և ոչ յապաղէ ի դատել զերկիր. և
զքեզ և զգործակիցսն քո տանջեսցէ
ի հուրն յաւիտենից. ուր որդն ան-
քուն է և հուրն ոչ շիջանի։ Օ՜ի զո-
րութի՛ւն քեզ հանդերձ հարբ և ամե-
սուրբ հոգւովն օրհնեալ է այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից։
Տէր աստուածն Ա՛ծ Իսրայէլի, որ փա-
րատեն զդևսս և զհիւանդութիւնս, և զամ
ախտս բժշկես. նայեա՛ ի վե՛ր ծառա-
յիս քո, և ի բաց մերժեա՛ ի սմանէ
զամ՝ ներգործուն սմին, ամաւթեա՛ այ-
սոց պղծոց և հալածեա՛ զնոսա. և վաղ-
վաղակի քոյին ազդմամբդ փրկեա՛ զը-
ծառայս քո. և խորտակեա՛ զսմոյ Ը-
ոսիւք տրա՛, և տո՛ւր սմա՛ յաշխարհի

ընդդէմ նորա հակառակութեանց, և
այսոց նորա պղծոց, որպէս զի առ՝ի
քէն օգնականութիւն առ ընկալեալ՝
արժանաւորեսցի անմահ և երկնաւոր
քոց պարգեւացդ. փառաւորելով ըզ-
հայր և զորդի և զսուրբ հոգի.
այժմ և՚՚.

Աղօթք:

Ո՛ր եսդ տէր տէր՝ որ արարեր ըզ-
մարդն ըստ պատկերի քումմ և ըստ
նմանութեան, և եառուր նմա իշխա-
նութիւն մշտնջենաւոր կենաց. և նո-
րա անկեալ ընդ մեղաւք՝ բանսարկուին
պատրանօք, և դու ոչ անտես արա-
րեր, այլ անօրինեցեր մարդանալով
քրիստոսի քո զիրկութիւն աշխարհի.
Դու ինքնին մարդասէր տէր՝ զուս-
գակեա կենաց սորա հրեշտակ լու-
սաւոր, փրկելով զսա յամ՛ խորհրդոց
թշնամոյն, ՚ի տուէ տարաժամէ, յե-
րեւելի և յանեղեւոյթ պատահարաց
չարին:

(Հայոց հարց և լուսնոտիք)

Ա՜ խեղճ ազգ, որ ինքնին, ինքնին, ինքնին,

որ եկեալ բանակեսցէ շուրջ զմեօք, և
անեղկիւղ պահեսցէ զմեզ յամէ հրե-
ղէն նետից սատանայի՝ որ թռչի ի
առուէ, յիւրաց խաւարային գնացից, ի
գայթակղութիւնէ դիւին ի հասարակ
աւուր։ Յորմէ զգուշութիւն պահելով
